ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի 2023-2028 թվականների զարգացման ծրագիր

Բովանդակություն

Ներածություն----------3

1. Հաստատության գործունեություն----------6

1. 1 Դպրոցի կրթական կարիքների բավարարման նկարագիր ----------6

1. 2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը կրթական քաղաքականության միտումներին, համայքի, շահառու կազմակերպությունների կարիքներին և հնարավորություններին ----------7

1. 3 Դպրոցի գործունեության համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքներին,մարդկային ռեսուրսներին, հնարավորություններին-------8

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր ----------9

2. 1 Շենքային պայմաններ. նյութատեխնիկական բազա ----------10

2. 2 Խորհրդակցական մարմիններ----------15

2. 3 Հաստատության համագործակցությունը համայնքի, կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ ----------26

2. 4 Ուսումնական միջավայր ----------30

2. 5 Կրթության որակ ----------33

2. 6 Կիրառվող տեխնոլոգիաներ և նորարարություններ----------41

2. 7 Իրավիճակի SWOT վերլուծության ամփոփում----------46

3. Նպատակների և խնդիրների սահմանում----------54

4. Արդյունքների գնահատման չափանիշներ----------78

5. Դպրոցիի զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմներ----------86

Վերջաբանի փոխարեն----------88

Ներածություն

ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն ՊՈԱԿ-ի ուսումնական հաստատության առաջիկա հինգ տարվա գործունեության նկարագրությունն է: Ծրագիրը ռազմավարական փաստաթուղթ է, որտեղ մանրամասնորեն վերլուծվել են ուսումնական հաստատության ուժեղ և թույլ կողմերը, ըստ վերլուծության սահմանվել են նպատակներ, ընտրվել լուծման համար նպատակահարմար սկզբունքներ և եղանակներ:

Յուրաքանչյուր հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության գլխավոր նպատակը բազմակողմանի զարգացած, մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացու դաստիարակությունն է: Ուստի Արենիի միջնակարգ դպրոցը ևս ընտրում է զարգացման այն ուղին, որը կնպաստի հայրենասեր, ազգանվեր գաղափարներով դաստիարակված, կյանքի փորձություններին դիմագրավող, սխալներից դասեր քաղող անհատի ձևավորմանը:

Պետության զարգացման գլխավոր նախապայմանը լայն աշխարհայացքով անհատներն են, ովքեր ձևավորում են պետության հիմք հանդիսացող հասարակությունը: Իսկ հասարակության մաս կազմող անհատները դաստիարակվում և նախապատրաստվում են կյանքի հենց դպրոցից: Ասել է թե հանրակրթական ուսումնական հաստատության գործունեությունը պիտի ուղղված լինի ***կրթության բովանդակության ապահովմանը, մանկավարժների մասնագիտական կատարելագործմանը, աշակերտների մոտիվացիայի բարձրացմանը, ուսումնական ապահով ու անխռով միջավայրի կառուցմանը, փոփոխություններին համընթաց, ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած կրթության ապահովմանը***: Վերոնշյալները կապահովեն արժանի քաղաքացու դաստիարակությունը, իսկ վերջինս էլ՝ զարգացման ավելի բարձր մակարդակ ունեցող հասարակության ձևավորմանը: Ահա սա է պետությաան հզորության ու ամրության գրավականը:

Արենիի միջնակարգ դպրոցի զարգացման հնգամյա ծրագիրը կազմվել է ՀՀ կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի հիման վրա: Զարգացման ծարգիրն անմիջականորեն կառուցված է ոլորտը կարգավորող

իրավական ակտերի, փաստաթղերի հիման վրա: Ստորև ներկայացնում ենք փաստաթղթերի ցանկը

- ՀՀ Սահմանադրություն
- Երեխայի իրավունքների մասինե ՀՀ օրենք
- Կրթության մասինե ՀՀ օրենք
- Հանրակրթությա մասինե ՀՀ օրենք
- Պետական ոչ առևտրային կազմակերպության մասինե ՀՀ օրենք
- Նորմատիվ իրավական ակտերի մասին ՀՀ օրենք
- Հանրակրթության պետական չափորոշիչ
- Դպրոցի կանոնադրություն
- Կրթության ոլորտը կարգավորող այլ օրենսդրական իրավական ակտեր, որոշումներ, հրամաններ, կարգեր
- ՀՀ կրթության զարգացման մինչև 2030 թվականի պետական ծարագիր

Ծրագրի կազմման ընթացքում հաշվի են առնվել մանկավարժական կոլեկտիվի, ծնողների, աշակերտների հետ կազմակերպված քննարկումները: Հիմնախնդիրները ձևակերպվել են հաշվի առնելով շահառու խմբերի առաջադրած մտահոգություններն ու առաջարկությունները:

Զարգացման հնգամյա ծրագիրը հիմք է հանդիսանում յուրաքանչյուր տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի համար, որից էլ բխում է ամբողջ դպրոցի գործունեությունը: Սույն ծրագիրը կազմված է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի 22 35-Ն հրամանով հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի ձևաչափին համապատասխան:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագիրը կառուցված է հետևյալ ձևաչափով. առաջինն անդրադարձ է կատարվել ուսումնական հաստատության իրականացրած գործունեությանը՝ անդրադառնելով այն կրթական կարիքների բավարարմանը, որոնք ապահովում է դպրոցը: Առաջին մասում անդրադարձ է կատարվել պետության կրթական քաղաքականության միտումներին, համայքի, շահառու կազմակերպությունների կարիքներին համապատասխան կրթության կազմակերպմանը, ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին:

Զարգացման ծրագրի երկրորդ մասում առանձնացրել ենք հաստատության գործունեության կարևորագույն օղակները, փորձել ենք վերլուծել հաստատության ուժեղ և թույլ կոմերը ըստ առանձնացրած ոլորտների: Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ձևակերպվել են ուսումնական հաստատության հիմնախնդիրները:

Զարգացման ծրագրի երրորդ մասում ըստ ոլորտների սահմանվել են ուսումնական հաստատության նպատակներն ու խնդիրները, նշվել են նպատակների իրագործմանը խոչընդոտող ռիսկերը, մշակվել են ռիսկերը մեղմող գործողություններ, կազմվել է գործողությունների ժամանակացույց՝ ըստ սահմանված ոլորտների: Գործողությունների ժամանակացույցի մեջ ներառված են նաև տվյալ գործողության կամ միջոցառման համար պատասխանատու անձինք, գործողության իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցները:

Զարգացման ծրագրի հաջորդ մասերը նպատակների ու խնդիրների, գործողությունների ժամանակացույցի անմիջական շարունակությունն են հանդիսանում՝ սահմանելով արդյունքների գնահատման չափանիշներ յուրաքանչյուր գործողության համար: ՈՒշադրություն է դարձվել նաև գործողությունների կատարման վերահսկողության մեխանիզմներին:

Զարգացման ծրագիրն ավարտվում է դեռևս մի քանի տարի առաջ գրված ելույթի տեսքով, որը ապագայի դպրոցի մեր տեսլականն է:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Դպրոցի կրթական կարիքների բավարարման նկարագիր

21-րդ դարի կարևորագույն հրամայականը արագ զարգացող գիտության և տեխնիկայի դարաշրջանում կրթության բովանդակության անընդհատ փոփոխումն է: Ժամանակակից կրթության ոլորտը պետք է համահունչ լինի դարաշրջանի պահանջներին: Կատարվող փոփոխությունների մեծ հոսքը ստիպում է անընդհատ սովորել, կատարելագործվել, վերաիմաստավորել արդեն իսկ ձեռք բերված գիտելիքները: Սակայն շատ դեպքերում ժամանակների պահանջները բավարարող կրթություն ապահովելը առաջացնում է խնդիրներ, որոնք կապված են դպրոցների տեխնիկական հագեցվածության հետ: Բայց նույնիսկ այս պարագայում պիտի քայլեր կատարել դպրոցները վերազինելու, երեխաների անհրաժեշտ կրթությամբ ապահովելու համար: Դպրոցի առաքելությունը սովորողների զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցություն, կրթության հավասարություն ապահովելն է:

Դպրոցի գործունեությունը պետք է միտված լինի հետևյալ կարիքների բավարարմանը

- ***Սովորողների շարունակական կրթության ապահովում***
- ***Արժեքային համակարգի, բարձր որակների դաստիարակություն***
- ***Ակադեմիական գիտելիքների բարձր ցուցանիշների գրանցում***
- ***Ակադեմիական գիտելիքներ գործնականում կիրառելու հնարավորության ստեղծում***
- ***Սովորողներին ինքնուրույն աշխատանքի ուղղորդելու, հետազոտական աշխատանք կատարելու հմտության ձևավորում***
- ***Սովորողի ստեղծարարության, ստեղծագործական աշխատանք կատարելու կարողության ձևավորում***
- ***Համակողմանի և ներդաշնակ զարգացած, ինքնուրույն կյանքի և գործունեության պատրաստ քաղաքացու ձևավորում***
- ***Ժամանակի պահանջներին, համայնքի զարգացմանը, համայնքի հնարավորությունների բացահայտմանը ուղղված մասնագիտական կողմնորոշման տեղեկատվության տրամադրում***

Ուսումնական հաստատության առաքելությունը վերոնշյալ կարիքների բավարարումն է :

1.2 Դպրոցի գործունեության համապատասխանությունը կրթական քաղաքականության միտումներին, համայնքի, շահառու կազմակերպությունների կարիքներին և հնարավորություններին

Վերոնշյալ հատվածներից պարզ է, որ յուրաքանչյուր հաստատության զարգացման ծրագիր միտված է ի կատար ածելու պետության կրթական քաղաքականությունը: Ըստ կրթության պետական քաղաքականության մինչև 2030 թվականի ռազմավարական ծրագրի նպատակների ուսումնական հաստատության գործունեության ընթացքում պետք է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին

- ***Հանրակրթության ոլորտում բովանդակային փոփոխությունների կատարման ապահովմանը՝ կատարված հանարկրթության չափորոշիչների ներդրման հետ***
- ***Ուսուցիչների մասնագիտական զարգացմանը, կամավոր և պարտադիր ատեստավորման, տարակարգի ստացման, ուսուցչի մասնագիտական գրավչության բարձրացմանը***
- ***Կրթության հավասարության ապահովմանը***
- ***Հանրակրթական հաստատություններում որակյալ ներառական կրթության ապահովման մեխանիզմների ներդրմանը***
- ***Ուսուցման այլընտրանքային եղանակների, աշակերտների նախասիրություններին համապատասխան լրացուցիչ կրթական ծառայությունների մատուցում***

Դպրոցն ակտիվ համագործակցում է պետական, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ ուսումնական հաստատությունների հետ, ինչը նպաստում է համայնքի հնարավորությունների բացահայտմանը, համայնքի զարգացմանը, համայնքի կարիքներին ու պահանջներին համապատասխան:

Համայնքը հանդիսանում է զբոսաշրջության կենտրոն, հարուստ է մշակութային տեսարժան վայրերով, ուստի անհրաժեշտություն է ներկայումս օտար լեզվով հաղորդացվելը: Համայնքի, բնակիչների այս կարիքից ելելով շուրջ երեք տարի է, որ ուսումնական հաստատությունում դասավանդվում է անգլերենը՝ որպես երրորդ օտար լեզու: Ահա ևս մեկ փաստ, որը հիմնավորում է դպրոցի՝ համայնքի, շահառու կողմերի կարիքների բավարարամանը միտված գործունեությունը:

1.3 <u>Դպրոցի գործունեության համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքներին, մարդկային ռեսուրսներին և հնարավորություններին</u>

Արենիի միջնակարգ դպրոցը գտնվում է Վայոց ձորի մարզի Արենի համայնքում՝ 3-րդ փողոց, շենք 40 հասցեում: Արենիի միջնակարգ դպրոցի շենքը կառուցվել է 1965 թվականին, ութամյա դպրոցի բազային հիմքի վրա: Դպրոցի կանոնադրությունը հաստատվել է 09.10.2017 թվականին, իսկ ՀՀ իրավաբանական անձանց ռեգիստրում գրանցվել է 16.01.2003 թվականին:

Դպրոցի նախագծային հզորությունը 248 է: Դպրոցում ըստ լիցենզիայի սահմանված են հետևյալ սահմանային տեղերը

Տարրական կրթական աստիճան 92 տեղ

Հիմնական կրթական աստիճան 110 տեղ

Ավագ կրթական աստիճան 48 տեղ

Դպրոցն այսօր ունի 16 դասասենյակ, 3 առարկայական սենյակ՝ ինֆորմատիկա, ՆԶՊ, շախմատ առարկաների դասավանդման համար, հանդիսությունների դահլիճ, մարզադահլիճ, մարզահրապարակ, ուսուցչանոց, 2 սանհանգույց: Շենքի մակերեսը 1303 քառակուսի մետր է: Ուսումնական հաստատությանը կից առկա են կաթսայատուն, սանհանգույց, մարզադաշտ:

Ուսումնական հաստատությունում 2023 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ աշխատում է 44 աշխատակից, որից 33-ը մանկավարժներ են: Ոսումանական հատատության մանակավարժները ունեն բարձրագույն կրթություն, հարուստ աշխատանքային փորձ:

Արենի համայնքը ունի շուրջ 1980 բնակչություն, որից երեխաների թիվը կազմում է 496: Ներկայումս Արենիի միջնակարգ դպրոցում սովորում են 302 աշակերտներ, որոնցից 23-ը Արցախից տեղահանված երեխաներ են: Դպրոցը համայնքի միակ կրթական հաստատությունն է և երկար տարիների մատուցած կրթական ծառայությունների որակով բազմիցս ապացուցել է տարածաշրջանում առաջիններից մեկը լինելը:Ուսումնական հաստատության աշակերտների թիվը տարեցտարի ավելանում է, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ուսումնական հաստատությունը տրամադրում է որակյալ և մրցունակ կրթական ծառայություններ:

2. Իրավիճակի վերլուծություն. ուժեղ և թույլ կողմեր

Ուսումնական հաստատության համար իրատեսական նպատակներ սահմանելու և այդ նպատակներն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է ճիշտ պլանավորում, որը հնարավորություն կտա բաժանել մեծ նպատակները ավելի փոքր նպատակների և փոքր քայլերով հասնել նպատակների իրագործմանը: Ուսումնառության և առհասարակ ուսումնական հաստատության արդյունավետ գործունեությունն ապահովելու համար պետք է հիմնվել տվյալների վրա, որոնք հնարավորություն կտան ավելի ճիշտ գնահատելու տվյալ իրավիճակը, արձանագրել խնդիրները, քայլեր ձեռնարկել խնդիրների լուծման ուղղությամբ: Այս ամենը իրականացնելու համար մեզ օգնում է հետազոտությունների SWOT համակարգը:

Իրավիճակի վերլուծությունը կատարվել է հետևյալ ուղղություններով.



2.1 Շենքային պայմաններ. նյութատեխնիկական բազա

Դպրոցի շենքը կառուցվել է 1965 թվականին, սկզբնական շրջանում դպրոցում իրականացվել է ութամյա կրթություն: Դպրոցն ունի հիմնանորագման կարիք: Դպրոցը վերջին անգամ վերանորոգվել է 2000 թվականին:Տարբեր հատվածներում կատարվել են ներքին հարդարման աշխատանքներ: 2023 թվականի հոկտեմբեր–նոյեմբեր ամիսներին փոխվել են դպրոցի պատուհանները, առաջիկայում նախատեսված է նաև դռների փոխման աշխատանքները: Դպրոցը չունի լոկալ ջեռուցման համակարգ, չեն ջեռուցվում միջանցքները, հանդիսությունների դահլիճը, մարզադահլիճը:

Վերջին տարիներին նկատվում է աշակերտների թվի աճ, որը ուրախալի երևույթ է, սակայն աշակերտների թվի աճին զուգահեռ դպրոցի մակերեսը չի բավականացնում լիարժեք գործունեության համար: Դասասենյակները քիչ են, ինչի հետևանքով հնարավոր է 2024-2025 ուսումնական տարվանից դպրոցն անցնի երկհերթ ուսուցման: Դասարանների մակերեսը չի համապատասխանում ստանդարտ սահմանված չափերին:

Դպրոցում չկան առարկայական կաբինետներ, արհեստանոց, լաբորատորիա, ինչը խանգարում է ուսուցիչների գործունեությանը, պակասում է աշակերտների հետաքրքրվածությունը բնագիտական առարկաների ուղղությամբ: Ուսումնական հաստատության մակերեսի չբավարարելու հետևանքով հաստատության ներսում իրականացվել է ներքին ձևափոխություններ: Դպրոցում նախկինում գործող առարկայական կաբինետները ներկայումս վերածվել են սովորական դասասենյակների: Տեխնոլոգիայի համար նախատեսված արհեստանոցը փոխարինվել է վերանորոգված և կահավորված թաքստոցով, քանի որ համայնքիը գտնվում է սահմանամերձ գոտում՝ անմիջապես թշնամու նշանակետի տակ, և ներկայումս ռիսկային է թաքստոց չունենալը: Արհեստանոցի բացակայությունը բացասաբար է անդրադառնում առարկայի դասավանսման որակի վրա: Շենքային պայմանները հնարավորություն չեն ընձեռնում լաբորատորիայի պատշաճ գործածմանը : Լաբորատորիան ներկայումս միացված է շախմատի կաբինետի հետ: Շենքային պայմանները, նյութատեխնիկական ոչ բավարար միջոցները նույնպես վատ են անդրադառնում բնագիտական առարկաների դասավանդման որակի վրա:

Ուսումնական հաստատության 1-4- րդ դասարանցիները հնարավորություն ունեն օգտվելու տաք սննդից, որը կազմակերպվում է վերջերս վերանորոգված

բարեկարգ ճաշարանում: Սակայն 5-րդ դասարանից սկսած աշակերտները հնարավորություն չունեն դպրոցի ներսում սնվելու, ինչը նույնպես վատ է անդրադառնում ուսման որակի վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացնում ենք ուսումնական հաստատության շենքային պայմանները.

N	Շենքային հարմարության անուն	Քանակ	Մակերես մ. քառ.
1	Պահակակետ	1	15
2	Բուժկետ	1	8
3	Առանձնասենյակ	4	59,6
4	Դասարան	16	471
5	Առարկայական լսարան	3	112
6	Մարզադահլիճ	1	137
7	Մարզահրապարակ	1	900
8	Գրադարան	1	30.2
9	Ճաշարան	1	45,8
10	Սանհանգույց	2	12,6
11	Ուսուցչանոց	1	33,6
12	Հանդիսությունների սրահ	1	175

Ֆինանսական միջոցներ, նյութատեխնիկական բազա

Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից՝ հաշվի առնելով ուսումնական հաստատությաունում սովորող աշակերտների թիվը: Շնորհիվ աշակերտների թվի աճի դպրոցը ունի ֆինանսկան միջոցների աճ, ինչի շնորհիվ վերջին մի քանի տարիների ընթացքում հնարավորություն է ստեղծվել իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ, համալրել դպրոցի նյութատեխնիկական բազան:

2023թ-ի սեպտեմբերից սկսած ՀՀ Կառավարության որոշումով ԿԳՄՍՆ նախարարի հրամանով դպրոցները ֆինանսավորվում են ըստ դասարանների թվի:

Դպրոցի ֆինանսական գործունեությունը բաց է ու թափանցիկ: Յուրաքանչյուր ֆիանսական տարվա համար կազմված նախահաշիվը ներկայացվում է խորհրդակցկան մարմիններին, քննարկվում է բյուջեի նախահաշիվը, խորհրդակցական մարմինները հանդես են գալիս առաջարկություններով, որոնք ամբողջականացնելուց հետո նախահաշիվը ներկայացվում է լիազոր մարմնի հաստատմանը:Նախահաշիվը և ֆինանսատնտեսական հաշվետվությունները տեղադրվում են դպրոցի և մարզպետի աշխատակազմի կայքում:

Ստորև ներկայացվող աղյուսակներ և գծապատկերների միջոցով կփորձենք համառոտ ներակայցնել այն ոլորտները, որոնց ուղղությամբ իրականցվել են ֆինանսկան ծախսեր:



2021 թվականի բյուջե





	2020	*2021*	*2022*
Ընդհանուր	*71.290.300*	*78.564.500*	*85.265.600*
Աշխատավարձ	*58.398.300*	*60.159.900*	*62.434.500*
Այլ ծախսեր	*4.938.700*	*6.186.800*	*9.277.100*
Մնացորդ	*7.953.300*	*12.217.800*	*13.554.000*

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան ըստ վերջին երեք տարիների ներկայացնում ենք ստորև.

Գույք	2020	2021	2022
Աշակերտական սեղան	198	198	198
Աշակերտական աթոռ	396	396	396
գրասեղան	30	30	30
հեռուստացույց	2	2	2
պահարան	30	30	30
տպիչ	8	8	9
պրոեկտոր	-	1	1
համակարգիչ	25	26	27
աթոռ	42	42	42
գրատախտակ	30	30	30
սառնարան	1	1	1
Գեղարվեստական գրականություն	2870	12170	12170
Ուսումնական գրականություն	2689	2334	2334

2.2 Խորհրդակցական մարմիններ

Կառավարման խորհուրդ

ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 27-րդ կետի համաձայն դպրոցի կառավարման մարմիններն են

- Հիմնադիրը

- ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, տարածքային կառավարման մարմինը
- Կոլեգիալ կառավարման մարմինը
- Գործադիր մարմինը, վարչատնտեսական մասի համակարգողը

Արենիի միջնակարգ դպրոցում իրականացվում է կոլեգիալ կառավարում: Կառավարման կոլեգիալ մարմինը հաստատության խորհուրդն է:2019 թվականից հաստատությունում գործում է միացյալ խորհուրդ՝ կազմված 19 անդամից:Կառավարման խորհուրդը գործում է լիազոր մարմնի կողմից սահմանված և դպրոցի կանոնադրությանմբ ամրագրված գործառույթների շրջանակներում, աջակցում է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի իրականացմանը, լսում է զարգացման ծրագրի կատարման վերաբերյալ հաշվետվություն և տալիս է եզրակացություն:



Մանկավարժական խորհուրդ

Արենիի միջնակարգ դպրոցում աշխատում են 33 մանկավարժներ, ովքեր էլ ձևավորում են ուսումնական հաստատության մանկավարժական խորհուրդը:Մանկավարժների մեծ մասն ունեն բարձրագույն կրթություն, մեկ մանկավարժ ունի միջին մասնագիտական կրթություն: Աշխատակազմի մեծ մասը հարուստ աշխատանքային փորձով մանկավարժներ են, սակայն վերջին շրջանում նկատվում է աշխատակազմի երիտասարդացում, ինչը հնարավորություն է տալիս երիտասարդ կադրերին աշխատել հարուստ աշխատանքային փորձով, գիտելիքների մեծ պաշարով, հմուտ մանկավարժ-հոգեբանների հետ: Ստորև կտեսնեք 2020-2023 թվականների ընթացքում մանկավարժական համակազմի տարիքային տեղաշարժը:



Ուսումնական հաստատության մանկավարժները շարունակ ինքնակրթվում և կատարելագործում են իրենց մասնագիտական հմտությունները: Յուրաքանչյուր ուսուցիչ, ըստ նախապես կազմված ժամանակացույցի, մասնակցում է պարտադիր ատեստավորումներին: 2023-2024 ուսումանական տարվանից սկսած մեծացել է նաև կամավոր ատեստացիային մասնակցած ուսուցիչների թիվը: 7 ուսուցիչներ բարձր ցուցանիշներով հաղթահարել են կամավոր ատեստավորումը և ստանում են հավելավճարներ: 3 ուսուցիչներ ունեն տարակարգի 1-ին աստիճան: Մեթոդական

մասնախմբերում 2023-2024 ուսումնական տարվա սկզբից քննարկվում են տարակարգի ստացման չափանիշները, ինչը փաստում է առաջիկայում տարակարգ ունեցող ուսուցիչների թվի մեծացում:

Մեկ ուսուցիչ մասնակցել է ԿԶՆԱԿ-ի կողմից 2, 5, 7, 10 դասարանների գնահատման բնութագրիչների մշակման աշխատանքներին:

2022-2023 ուսումնական տարվանից սկսած Արենիի միջնակարգ դպրոցը համագործակցում է, <<Դասավանդի՛ր, Հայաստան>> հիմնադրամի հետ: Համագործակցության շրջանակներում դպրոցը ներգրավված է տարբեր միջոցառումներում, կրթական ծրագրերում: Ներկայումս 2 մանկավարժներ հանդիսանում են հիմնադրամի ուսուցիչ-առաջնորդ և մանկավարժական կոլեկտիվի հետ կիսվում են երկարատև վերապատրաստումների ձեռքբերումներով և փորձով:

Ուսուցիչները պարբերաբար մասնակցում են մասնագիտական կարողություններին և հմտություններին ուղղված սեմինարների, դասընթացների:

Դպրոցում մշտական բնույթ են կրում քննարկումները, կլոր սեղանները, որոնց ընթացքում քննարկվում են տարբեր մեթոդներ և հնարներ, ՏՀՏ գործիքներ: Պարբերաբար կազմակերպվում են փոխադարձ դասալսումներ, բաց դասեր, միջոցառումներ:

Ներկայումս ուսումնական հաստատությունում չկան մասնագետների պակաս, բայց առաջիկա տարիներին դպրոցում կլինի բնագիտական առարակների ուսուցիչների պակաս, քանի որ չունենք այդ ուղղությամբ ուսումը շարունակող ուսանողներ:

Աշակերտական համակազմ. աշակերտական խորհուրդ

Ուրախությամբ պետք է նշել, որ Արենիի միջնակարգ դպրոցը համայնքի այն բացառիկ դպրոցներից է, որտեղ վերջին մի քանի տարիներին նկատվում է աշակերտների թվի աճ: Ստորև տեղադրված գրաֆիկը ցույց է տալիս վերջին երեք տարիների աշակերտների թիվը:



Ուսումնական հաստատության 1-12-րդ դասարանների աշակերտները ակտիվորեն մասնակցում են ինչպես ներդպրոցական, այնպես էլ արտադպրոցական տարբեր միջոցառումների՝ միշտ բարձր պահելով դպրոցի հեղինակությունը:

Տարրական դասարաններում մեծ մասնակցություն կա <<Մեղու>> և <<Կենգուրու>> մրցույթներին: Ավելի բարձր դասարաններում մեծանում է հետաքրքրությունը առարկայական օլիմպիադաների նկատմամբ: Դպրոցը մեծ նվաճումներ ունի հատկապես սպորտի բնագավառում: Գրեթե բոլոր մրցույթներից դպրոցի թիմը վերադառնում է հաղթանակներով:

Աշակերտները մասնակցում են նաև համայնքային տարբեր ծրագրերի իրականացմանը, ներգրավվում են շաբաթօրյակների, հասարակական աշխատանքներ մեջ: Համայնքում կարևորվում է կրթությունը. դպրոցը և ուսուցիչները համայնքում վայելում են սեր և հարգանք, ինչը փոխանցվում է հաստատության աշակերտներին: Սա շրջանավարտների՝ տարբեր բուհեր ընդունվելու հիմնական պատճառն է:

Աշակերտական համակազմի ակտիվ և գործունյա անդամները ներգրավված են աշակերտական խորհրդի կազմում:

Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին աշակերտական խորհրդի նախագահի հավակնորդները ներկայացնում են իրենց նախընտրական ծրագրերը,

որոնք սովորաբար ուղղված են լինում աշակերտական կյանքի ակտիվացմանը, դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանմանը, տարբեր միջոցառումների և ծրագրերի իրականացմանը: Աշակերտները իրենց նախասիրությունների համաձայն ընտրություն են կատարում և ողջ աշակերտական համակազմը միասնական ձեռնամուխ է լինում ընտրված ծրագրի իրականացմանը:

2023-2024 ուսումնական տարում Արենիի միջնակարգ դպրոցում սովորում են՝

Նախակրթարան ՝ 25 աշակերտ

1-4-րդ դասարաններ՝ 108 աշակերտ

5-9 –րդ դասարաններ՝ 114 աշակերտ

10-12-րդ դասարաններ՝ 55 աշակերտ

Ընդհանուր 302 աշակերտ, որոնց թվում են նաև Արցախից բռնի տեղահանված 23 աշակերտներ: Ստորև ներկայացնում ենք աշակերտական առօրյայից նկարներ.

Ծնողական խորհուրդ

Դասարանների ծնողական խորհուրդները ընտրվում են դասարանի ծնողների ընդհանուր ժողովի կողմից մեկ տարի ժամկետով: Յուրաքանչյուր դասարանի ծնողական խորհուրդ կազմված է մեկ նախագահից և երկուսից չորս անդամից: Դպրոցի ծնողական խորհուրդը կազմավորվում է դասարանների ծնողական խորհուրդների նախագահներից փակ քվեարկության արդյունքում: Վերոնշյալ հիմունքներով յուրաքանչյուր ուսումնական տարի Արենիի միջնակարգ դպրոցում ձևավորվում են դասարանական ծնողական խորհուրդներ, այնուհետև փակ քվեարկությամբ ընտրվում է ծնողական խորհրդի նախագահ:

Ծնողական համայնքը՝ ի դեմս ծնողական խորհրդի, ակտիվ համագործակցում է ուսումնական հաստատության մանկավարժական կոլեկտիվի, դասղեկների հետ՝ փորձելով համագործակցության արդյունքում դրական ազդեցություն ունենալ կրթության որակի բարելավման ուղղություններով: Դպրոցի արդյունավետ գործունեության հիմքում դպրոց – ծնող համագործակցությունն է , որքան ամուր է և վստահելի է այդ կապը, այնքան արդյունավետ է հաստատության գործունեությունը, նրա մատուցած կրթության որակը: Ուստի բացի ուսումնական տարվա ընթացքում գումարվող ծնողական ժողովները, ծնողներին անմիջական մասնակիցը պիտի դարձնել՝ նրանց վերապահելով վերահսկողություն իրականացնողի յուրահատուկ դեր:

Ծնողական համայնքը պետք է ներգրավված լինի ուսումնական գործընթացում, հանդես գա առաջարկություններով, մասնակացի դասալսումների, վարի ծնողական դասեր, կիսվի փորձով, որը կարող է ուղղորդող լինել յուրաքանչյուր աշակերտի համար:

Դպրոցի զարգացման ծրագիրը կազմելիս հանդիպում է կազմակերպվել ծնողական խորհրդի հետ: Հանդիպման ընթացքում ծնողները հանդես են եկել առաջարկություններով, որոնք փորձել ենք ներառել զարգացման ծրագրի տարբեր բաժիններում:

Մեթոդական մասնախմբեր

Արենիի միջնակարգ դպրոցում գործում են հետևյալ մեթոդական մասնախմբերը.



Հիմք ընդունելով դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանը առարկայական մեթոդական միավորումները կազմում են իրենց տարեկան աշխատանքային պլանները:

Մեթոդական միավորումները քննարկում են դպրոցական բաղադրիչի տնօրինման կարգը, կատարում նախնական դասաբաշխում:

Ակտիվորեն մասնակցում են առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի կազմակերպմանը, կազմում և քննարկում առաջադրանքներ տարբեր առարկաներից, քննարկում և հաստատմանն են ներկայացնում գրավոր աշխատանքների քանակը և տեսակները, մեթոդմիավորման կողմից ընտրվում և մանկավարժական խորհրդը քննարկում և տնօրենի հաստատմանն է ներկայացնում ձևավորող գնահատման տարբեր գործիքներ:

Ըստ սահմանված հաճախականության գումարվում են մեթոդական միավորման նիստեր, որտեղ քննարկվում են մեթոդական հարցեր, կազմակերպվում են բաց դասեր, փոխադարձ դասալսումներ:

Մեթոդական մասնախմբերի, ինչպես նաև մանկավարժական համակազմի աշխատանքի ընթացքի վրա ազդեցություն են ունենում կրթության համակարգում արագ կատարվող փոփոխությունները: Մանկավարժների մեծ մասը կատարվող փոփոխությունների հետ շատ դժվարությամբ է հարմարվում: Անհարժեշտ է իրականացնել տարբեր միջոցառումներ, վերլուծություններ, որոնք կփաստեն փոփոխությունների դրական ազդեցությունները:

2.3 Հաստատության համագործակցությունը համայնքի, կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ

Ուսումնական հաստատության գործունեության գլխավոր նպատակը համակողմանի և ներդաշնակ զարգացած քաղաքացու ձևավորումն է, քաղաքացի, ով առաջին հերթին պատասխանատվություն է կրում իր երկրի, համայնքի շենացման, հարստացման համար: Հետևաբար դպրոցը իր գործունեությամբ չի կարող անմասն մնալ պետական և համայնքային կառույցների հետ մշտական համագործակցությունից:

Դպրոցն իր ուսուցչական և աշակերտական համակազմով ակտիվ մասնակցում է համայնքում կազմակերպվող միջոցառումներին, տոներին, զանազան քննարկումների և հանդիպումների: Աշակերտները կատարում են հասարակական աշխատանքներ, մասնակցում կազմակերպվող շաբաթօրյակներին: Կատարում են հետազոտություններ, իրականացնում են նախագծային աշխատանքներ, որոնք ուղղված են համայնքի հնարավորությունների բացահայտմանը: Նախագծային աշխատանքի միջոցով, կարևորելով համայնքի մաքրությունը, դպրոցի տարածքում տեղադրվել են աղբամաններ: Իրականացրել են տեսարժան վայրերի ուսումնասիրություն, հավաքել փաստեր համայնքի տարածքի տեսարժան վայրերի վերաբերյալ, տեղեկատվությունը թարգմանել օտար լեզուներով, վերածել QR կոդի և տեղադրել համայնքի տարբեր հատվածներում, տարածել սոցիալական կայքերում՝ մեծացնելով համայնքի ճանաչելիությունը: Դպրոցը սերտ համագործակցում է հարակից համայնքների, մարզկենտրոնի

ուսումնական հաստատությունների հետ, ստանում աջակցություն մենթոր դպրոցներից:

Պարբերաբար հանդիպումներ են կազմակերպվում ոստիկանության և արտակարգ իրավիճակների նախարարության հետ, իրականացվում են տարհանումներ:

Դպրոցի համագործակցությունը սերտ է կրթության ոլորտի կազմակերպությունների հետ՝ Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն, <<Դասավանդի՛ր, Հայաստան>> հիմնադրամ, <<Զարթնիր>> հասարակական կազմակերպություն, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոն:

Դպրոցն ակտիվորեն մասնակցում է Կրթության զարգացման և նորարությունների ազգային կենտրոնի կողմից կազմակերպվող տարբեր միջոցառումների, որոնցից է աշակերտների փոխանակաման <<Իմ կյանքը համայնքում ծրագիրը>>, <<Ես եմ ռեժիսորը>> ֆիլմաստեղծման ծրագրին:

Համայնքը բացահայտող նախագծային աշխատանքի արդյունքը

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԿԱՅԱԿԱԳԻՐ

Տրվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջն. դպրոցին

«Ես եմ ռեժիսորը» աշակերտական նախագծի

«Ֆիլմ-հերոս»

անվանակարգում մասնակցության համար:



ԿԶՆԱԿ հիմնադրամի տնօրենի ԺՊ՝
ԱՐՏԱՇԵՍ ԹՈՐՈՍՅԱՆ

2023

2.4 Ուսումնական միջավայր

Համայնքները և համայնքներում գործող ուսումնական հաստատությունները, շատ հաճախ, հեռու լինելով քաղաքներից, չեն կարողանում ապահովել կրթության հավասար պայմաններ աշակերտների համար: Մասնագիտական կադրերի պակասը բացասաբար է անդրադառնում կրթության որակի, աշակերտների սովորելու ցանկության վրա: Չնայած վերջին տարիներին պակասող մասնագետներին փոխարինելու հնարավորություն է ընձեռում հեռավար ուսուցումը, բայց, այնուամենայնիվ, հեռավար կրթություն իրականացնելու ժամանակ էլ դպրոցները հանդիպում են շատ դժվարությունների:Աշակերտների սովորելու ցանկության, մոտիվացիայի վրա մեծ ազդեցություն է թողնում դպրոցի ուսումնական միջավայրը, այն վայրը, որտեղ աշակերտն անց է կացնում իր օրվա մեծ մասը:

Ուսումնական միջավայրը պիտի հարմարեցված լինի աշակերտներին: Հարմարավետ, գեղեցիկ, բարեկարգ, տեխնիկապես զարգացած ուսումնական միջավայրը մոտիվացնում է աշակերտներին ավելի արդյունավետ աշխատանքի:

Ուսումնական միջավայրի մասին խոսելիս պետք է ուշադրություն դարձնել հետևյալ կետերին.

- ժամանակակից մեթոդների, ՏՀՏ գործիքների կիրառմամբ աշակերտակենտրոն դասերի կազմակերպմանը,
- լայն, ընդարձակ, գեղեցիկ կահավորված դասասենյակներ,
- յուրաքանչյուր առարկային համապատասխան դիդակտիկ նյութերով ապահովվածություն,
- հոգեբանական կայուն միջավայր,
- հարմարավետ միջավայր աշակերտների ընդմիջումները կազմակերպելու համար
- ընթերցանության անկյուն, շախմատ, նկարչական պարագաների առկայություն...
- ուսումնական հաստատության ներսում սնվելու հնարավորություն:

Այս պայմանների առկայության դեպքում գուցե ունենանք ինքնավստահ, ինքնուրույն գործելու ցանկությամբ, մոտիվացված աշակերտ, ով ի զորու է խոչընդոտներ ու արգելքներ հաղթահարել իր նպատակներին հասնելու համար:
Պետության իրականացրած կրթության ռազմավարական ծրագրի նորարարություններից մեկը հանրակրթական հաստատություններում որակյալ ներառական կրթության ապահովման մեխանիզմների ներդրումն է: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող աշակերտների ուսումնական գործընթացում ներգրավվելու կարևոր նախապայմաններից մեկը միջավայրին հարմարեցումներն են: Միջավայրային հարմարեցումներին զուգահեռ նորարարական տեխնոլոգիաների և մոտեցումների կիրառումն է, որն էլ կապահովի չափորոշչով սահմանված պահանջների իրագործումը: Արենիի միջնակարգ դպրոցը տարածաշրջանում առաջիններից է , որ իրականցնում է ներառական կրթություն: Դպրոցն ունի բազմամասնագիտական թիմ, սերտորեն համագործակցում է Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցությաան կենտրոնի հետ: Դպրոցում 2023-2024 ուումնական առաջին կիսամյակի տվյալներով սովորում են 5 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ:

Դպրոցը մեծ ուշադրություն է դարձնում ոչ ֆորմալ կրթությանը: 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում է իրականացնել 10 թեմաներով նախագծային աշխատանքներ, որոնք միտված են աշակերտական առաջնորդական կարողությունների զարգացմանը, ինքնուրույն աշխատանքին կատարելու, հետազոտելու, հմուտ և վարժ խոսք կառուցելու հմտությունների զարգացմանը:Դպրոցում գործում են արտադասարանական խմբակներ՝ աշակերտների նախասիրություններին համապատասխան:

Շուրջ երկու տարի է Արենիի միջնակարգ դպրոցի 30 աշակերտներ մասնակցում են <<Զարթնիր>> հասարակական կազմակերպության շնորհիվ իրականցվող ընթերցանության խմբակին, որի քննարկումները, սակայն, կազմակերպվում են դպրոցից դուրս՝ համապատասխան միջավայր չունենալու պատճառով:

Դպրոցն առաջնորդվում է <<Առողջ հոգի, առողջ մարմնում>> կարգախոսով և մեծ ուշադրություն է դարձնում աշակերտների ֆիզիկական պատրաստվածությանը: Պարբերաբար կազմակերպվում են սպորտմիասնական օրեր, ֆուտբոլի, վոլեյբոլի, բասկետբոլի, թենիսի, շախմատի մրցաշարեր, որոնց մասնակցում են նաև հաստատության ուսուցիչները:



2.5 Կրթության որակ

Դպրոցի առաքելությունը ժամանակակից պահանջներին համապատասխան որակյալ, յուրաքանչյուր աշակերտին հասանելի կրթության տրամադրումն է: Կրթության որակը հսկելու լավագույն տարբերակը ուսումնադաստիարակչական պլաններով, ներդպրոցական վերահսկողության պլանով այլ տարեկան աշխատանքային պլաններով նախատեսված գործողությունների իրականացումն է, դրանց արդյունքների ուսումնասիրությունը և վերլուծությունը, ըստ ուսումնասիրությունների արդյունքների խնդիրների դուրսբերումը և այդ խնդիրների լուծմանն ուղղված ռազմավարական ծրագրերի մշակումը: Դպրոցի մատուցած կրթության որակի տեսանելի ցուցանիշը դպրոցի մասնակցությունն է տարբեր կրթական միջոցառումներին, աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, մշակույթային, սպորտային միջոցառումներին, որտեղ աշակերտները միշտ բարձր են պահում դպրոցի պատիվը:

Կրթության որակը ուշադրության կենտրոնում պահելու համար ուսումնական հաստատությունն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում իրականացնում է տարբեր առարկաների մշտադիտարկումներ: Մշտադիտարկումների արդյունքում վեր են հանվում կարիքները, և կազմվում են գործողությունների ժամանակացույց կարիքների լուծման համար: Մշտադիտարկումները կազմակերպվում են ըստ ներդպրոցական վերահսկողության պլանի, ՈՒԱԳՏ փոխտնօրենի աշխատանքային պլանի:

Իրականացվում են առարկաների դրվածքների ստուգում նախապես սահմանված կոնկրետ ժամկետի ընթացքում: Առարկաների դրվածքի ուսումնասիրության ժամանակ ստուգվում է աշակերտների պատրաստվածության մակարդակը, դասանյութի մատուցման արդյունավետությունը, մնացորդային գիտելիքները:

Տարրական դասարաններում 2020-2021 ուսումնական տարվանից սկսած յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում և վերջում իրականացվում է ընթերցանության ստուգում նախապես մշակված ռուբրիկների հիման վրա: Տարվա սկզբի ստուգումը հայտորոշիչ է, որի հիման վրա յուրաքանչյուր դասարանի համար սահմանվում է տոկոսային շեմ, որին պետք է հասնի դասարանը ուսումնական տարվա ավարտին: Ավելի բարձր արդյունքների հասնելու համար ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, որոնք բարձրացնում են աշակերտների մոտիվացիան, կիրառվում են խրախուսման տարբեր միջոցներ:

Օտար լեզուների դրվածքի ուսումնասիրության ժամանակ ստուգումը իրականացվում է գրավոր և բանավոր՝ մեծ տեղ հատկացնելով օտար լեզվով հաղորդակցմանը:

Դեռևս նախորդ ուսումնական տարվանից սկսած ուսումնական հաստատությունում կիրառվում է հայտորոշիչ գնահատումը: Ուսումնական տարվա սկզբում յուրաքանչյուր ուսուցիչ իրականացնում է հայտորոշում, որի հիման վրա էլ սահմանվում է դասարանի՝ ուսումնական տարվա մեծ նպատակը:

Ուսումնական հաստատության մեթոդական միավորումների մշակմամբ ուսումնական գործընթացում կիրառվում են գնահատման ռուբրիկներ, որոնք և՛ս հնարավորություն են տալիս վերահսկել ուսումնական գործընթացի արդյունավետությունը:

Յուրաքանչյուր կիսամյակի ավարտին տոկոսային հարաբերությամբ մանկավարժական խորհրդին է ներկայացվում դասարանի առաջադիմության որակը: Ցածր որակի դեպքում դասավանդող ուսուցիչները կատարում են վերլուծություններ և մշակում ռազմավարություն, որը կնպաստի դասարանի առաջադիմության որակի բարձրացմանը:

Ստորև ներկայացված աղյուսկաներում կարող եք տեսնել վերլուծության ձևաթուղթ 2022-2023 ուսումնական տարվա 1-ին,2-րդ կիսամյակների համար, վերջին երեք ուսումնական տարիներին գերազանց , լավ առաջադիմություն ունեցող աշակերտների թիվը տոկոսային հարաբերությամբ, 4-րդ, 9-րդ,12-րդ դասարանների քննական արդյունքերի միջինացված գնահատականները:

A1:AK29 fx Առարկա

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N	O	P	Q	R	S	T	U	V	W	X	Y	Z	AA	AB	AC	AD	AE	AF	AG	AH	AI	AJ	AK
2		9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1
3	Մայրենի	1	9	3	-	3	6	5	-	5	7	4	-	-	-	-	-	-	-	-	-					-	-	-	-								
4	Գրականություն	-	-	-	--	-	-	-	-	-	-	-	-	7	10	6	-	7	4	14	-	4	5	10	-	6	11	5	-	2	11	3	-	7	9	4	-
5	Հ.լեզու	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	2	10	11	-	4	8	13	-	4	4	11	-	1	12	9	-	1	8	7	-	7	8	5	-
6	Ռ.լեզու	3	5	5	--	2	3	9	-	3	6	7	-	3	8	12	-	4	8	12	1	1	4	14	-	2	8	12	-	4	5	7	-	4	3	13	-
7	Անգլերեն	8	2	3	--	-	6	8	-	2	8	6	-	4	8	11	-	4	9	12	-	4	6	9	-	-	14	8	-	2	3	11	-	5	4	11	-
8	Գերմաներեն	3	6	4	--	2	4	8	-	3	6	7		3	9	11	-	-	-	-	-	-	-	-	-												
9	Մաթեմատիկա	3	6	4	--	3	9	2	-	6	9	1		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-												
10	Հանրահաշիվ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	4	9	10	-	1	6	16	2	1	5	13	-	4	8	10	-	1	3	12	-	5	4	11	-
11	Երկրաչափությ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	3	9	11	-	2	5	17	1	3	3	13	-	6	8	8	-	1	2	13	-	6	3	11	-
12	Երաժշտություն	11	2	-	-	-	-	-	-	-	--	-	-	15	7	1	-	-	-	-	-	-	-	-	-												
13	կերպարվեստ	8	5	-	-	9	5	-	-	9	7	-	-	-	-	-	-	-	-	-	-																
14	բնագիտություն	7	5	1	-	2	5	7	-	6	5	5	-	-	-	-	-	-	-	-	-																
15	աշխարհագր					2	7	5	-	6	7	5	-	-	-	-		6	10	9	-	4	12	3	-	3	13	6	-	1	12	3	-	10	4	6	-
16	Հ.պատմություն					2	6	6	-	6	5	5	-	11	4	8	-	7	4	12	2	3	8	8	-	6	11	5	-	3	4	9	-	6	4	10	
17	համ. պատմ					2	1	11	-	6	4	6	-	7	6	10	-	7	4	12	2	1	7	11	-	1	8	13	-	3	4	9	-	6	4	10	
18	հեպ	6	6	1	-	2	8	4	-	6	5	5	-	10	5	8	-	8	8	9	-	7	8	4	-	2	12	8	-	1	9	6	-				
19	հասարակագ	-	-	-	-		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	6	15	4	-	5	7	7	-	9	9	4	-	1	11	4	-	3	9	8	-
20	հայրենագիտ	8	5	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-					-											
21	ինֆորմատիկա	-	-	-	-	3	11	-	-	9	7	-	-	11	10	2	-	13	12	-	-	11	8	-	-	11	11	-	-	12	3	1	-	10	9	1	-
22	ֆիզիկա	-	-	-	-	--	-	-	-	-	-	-	-	4	7	10	2	4	7	14	-	4	6	8	1	1	7	14	-	1	5	10	-	4	4	12	-
23	քիմիա	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	1	10	12	-	3	6	15	1	2	3	14	-	2	5	15	-	-	3	13	-	3	5	12	-
24	կենսաբանություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	8	6	7	2	7	8	10	-	2	8	9	-	2	8	12	-	1	7	8	-	3	5	12	-
25	տեխնոլոգիա	13	-	-	-	14	-	-	-	16	-	-	-	21	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-		-	-	-	-	--	-
26	նզպ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	15	10	-	-	10	9	-	-	9	13	-	-	7	8	1	-	10	9	1	-
27	ֆիզկուլտ	12	1	-	-	6	8	-	-	10	6	-	-	14	9	-	-	11	14	-	-	11	8	-	-	5	11	6	-	4	8	3	1	10	9	-	-
28		-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	--	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	--	-	-	-	-	--	-	-
29	ԱԵՊ	11	2	-	-	11	3	-	-	15	1	-	-	15	7	1	-	--	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	--	-	-

	A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N	O	P	Q	R	S	T	U	V	W	X	Y	Z	AA	AB	AC	AD	AE	AF	AG	AH	AI	AJ	AK
1	Առարկա	5a				6ա				6բ							7				8				9				10				11				12
2		9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1	9-10	8-7	6-4	3-1
3	Մայրենի	4	8	1	-	3	4	7	-	4	7	5	-																								
4	Գրականություն													10	11	2	-	5	7	13	-	5	5	9	-	4	14	1	-	1	10	5	-	-	-	-	-
5	Հ.լեզու													4	10	9	-	6	4	15	-	3	5	11	-	7	11	4	-	2	5	9	-	6	7	1	-
6	Ռ.լեզու	3	6	4	-	3	5	6	-	3	8	5	-	7	8	8	-	3	10	12	-	5	10	4	-	2	10	10	-	5	7	4	-	5	7	8	-
7	Անգլերեն	6	5	2	-	3	4	7	-	1	9	6	-	7	7	9	-	4	11	10	-	6	4	9	-	4	12	6	-	1	6	9	-	5	5	10	-
8	Գերմաներեն	4	6	3	-	3	4	7	-	5	5	6	-	7	6	10	-																				
9	Մաթեմատիկա	4	3	6	-	2	7	5	-	4	9	2	-																								
10	Հանրահաշիվ													5	6	12	-	3	7	15	-	3	5	11	-	4	6	11		1	3	11	1	4	1	3	-
11	Երկրաչափությ													5	7	11	-	3	5	17	-	3	2	14	-	5	7	10	-	1	3	12	-	4	2	2	-
12	երժշտություն	12	1	-	-	13	1	-	-	16	-	-	-	-	-	-	-																				
13	կերպարվեստ	11	2	-	-	-	-	-	-	-	-	-	-	21	2	-	-																				
14	բնագիտություն	4	7	2	-	2	7	5	-	7	4	5	-																								
15	աշխարհագր					1	7	6	-	5	6	5	-	7	11	5	-	2	11	12	-	2	8	9	-	2	16	4	-	1	11	4	-	9	8	3	-
16	Հ.պատմություն					2	5	7	-	5	7	4	-	7	8	8	-	6	3	16	-	6	6	7	-	1	9	12	-	3	4	9	-	4	1	-	-
17	համ. պատմ					2	4	8	-	7	4	5	-	4	10	9	-	3	10	12	-	5	5	9	-	4	4	14	-	3	4	9	-	-	-	-	-
18	հեպ	6	7	-	-	3	8	3	-	9	3	4	-	10	9	4	-	8	9	8	-	5	6	8	-	15	6	1	-	7	8	-	-	-	-	-	
19	հասարակագ																	6	10	9	-	5	5	9	-	7	9	6	-	1	11	4	-	3	8	9	-
20	հայրենագիտ	6	6	1	-													-	-	-	-																
21	ինֆորմատիկա					4	10	-	-	12	4	-	-	12	10	1	-	16	9	-	-	16	3	-	-	12	10	-	-	8	7	1	-	-	-	-	-
22	ֆիզիկա													3	9	11	-	6	6	13	-	4	6	8	1	5	12	5	-	2	4	10	-	4	3	13	-
23	քիմիա													3	9	11	-	2	8	15	-	2	4	13	-	2	5	15	-	1	1	14	-	2	2	11	-
24	կենսաբանութ													7	6	10	-	7	5	13	-	5	7	7	-	3	8	11	-	1	6	9	-				
25	տեխնոլոգիա	13	-	-	-	14	-	-	-	16	-	-	-	20	3	-	-																				
26	նզպ																	13	12	-	-	10	9	-	-	10	12	-	-	8	7	1	-	10	9	1	-
27	ֆիզկուլտ	11	2	-	-	10	4	-	-	13	3	-	-	14	9	-	-	14	11	-	-	10	9	-	-	7	15	-	-	8	7	1	-	10	9	-	-
28	տնտեսագիտ																																				
29	ԱԵՊ	12	1	-		13	1	-	-	16	-	-	-	21	1	1	-											-									
30																																					

A	B	C	D	E	F	G	H	I	J	K	L	M	N	O	P	Q
Հ/Հ	դասարան	Դասղեկ	Աշակերտների թիվը տարեսկզբում	Ընթացքում դասարանից դուրս եկած աշակերտներ	դասարան եկած աշակերտների	Աշակերտների թիվը կիսամյակի վերջում	Բացակայություն	Գնահատված	Չգնահատված	հարվածային	գերազանցիկներ	միջին	Չառաջադիմ		առաջադիմության %	որակ
													4 գնահատված	Յանբավարար		
1	1ա	Խաչատրյան Ք.	17	չկա	չկա	17	173	-	-	-	-	-	-	-	-	-
2	1բ	Խաչատրյան Ա.	16	չկա	չկս	16	216	-	-	-	-	-		-	-%	-%
3	2	Զաքարյան Պ.	19	չկա	չկա	19	263	19	չկա	13	5	1	չկա	չկա	100%	95%
4	3	Բաղդասարյան	27	չկա	չկա	24	185	27	չկա	10	8	9	չկա	չկա	100%	67%
5	4	Մկրտչյան Մ.	21	չկա	չկա	21	603	21	չկա	13	3	5	1	չկա	100%	76.2%
6	5	Կարապետյան Բ.	13	չկա	չկա	13	327	13	չկա	6	1	6	չկա	չկա	100%	54%
7	6ա	Հայրեպետյան Հ.	14	չկա	չկա	14	415	14	չկա	3	1	10	5	ՉԿԱ	100%	21%
8	6բ	Մաթևոսյան Վ.	16	չկա	չկա	16	391	16	չկա	9	1	6	4	չկա	100%	62.5%
9	7	Սարգսյան Ա.	23	չկա	չկա	23	525	23	չկա	8	2	13	8	չկա	100%	43%
10	8	Եոյան Ա.	25	չկա	չկա	25	717	25	չկա	6	1	18	15	6	80%	28%
11	9	Մկրտչյան Ա.	19	չկա	չկա	19	482	19	չկա	3	2	14	7	1	94%	26.6%
12	10	Մանուկյան Ծ.	22	չկա	չկա	22	700	22	չկա	6	-	16	7	չկա	100%	27%
13	11	Ճատուրյան Ա.	16	չկա	չկա	16	396	16	չկա	2	-	14	10	1	94%	13%
14	12	Կարապետյան Ա.	20	չկա	չկա	20	0	20	չկա	5	2	13	10	չկա	100%	35%
15																
16																
17																


Գերազանց առաջադիմությամբ սովորող աշակերտների թիվը տոկոսային հարաբերությամբ
2020-2021 ուսումնական տարի
19 %
2021-2022 ուսումնական տարի
6 %
2022-2023 ումնական տարի
11 %


Լավ սովորող աշակերտների թիվը տոկոսային հարաբերությամբ
2020-2021 ուսումնական տարի
29 %
2021-2022 ուսումնակա ն տարի
39 %
2022-2023 ումնական տարի
39 %

Վերջին երեք ուսումնական տարիների 4-րդ դասարանի գիտելիքների ստուգման միջին գնահատականներ
Մաթեմատիկա
Մայրենի
10
8
6
4
2
0
2020-2021
2021-2022
2022-2023


Վերջին երեք ուսումնական տարիների 9-րդ դասարանի քննական առարկաների միջին գնահատականներ
Մաթեմատիկա
Հ. լեզու
Հայ գրական.
Օտար լեզու
Հ. պատմ.
Բնագիտություն
20
15
10
5
0
2020-2021
2021-2022
2022-2023

Վերջին երեք ուսումնական տարիների 12-րդ դասարանի քննական առարկաների միջին գնահատականներ
Մաթեմատիկա
Հ. լեզու
Հ. պատմ.
20
15
10
5
0
2020-2021
2021-2022
2022-2023


Տվյալ տարում դպրոցն ավարտած աշակերտների թիվը
Տվյալ տարում ԲՈՒՀ ընդունված աշակերտների թիվը
20
15
10
5
0
2020-2021
2021-2022
2022-2023

Կրթության որակի ապահովման լավագույն գրավականը մոտիվացիան է: Մոտիվացիան պայմանների ամբողջություն է, որը դրդում է հասնել նույնիսկ ամենաբարդ թվացող, անիրագործելի նպատակների իրականացմանը: Ուսումնական գործընթացում մոտիվացիան պետք է թե՛ աշակերտներին, թե՛ ուսուցիչներին: Սակայն ուսուցիչների մոտիվացված լինելու պարագայում ուսուցիչը կարող է մոտիվացիայի աղբյուր հանդիսանալ տասնյակ աշակերտների համար:
Ժամանակակից մոտեցումներով կազմակերպված վերապատրաստումները հնարավորություն են տալիս մանկավարժների մեջ բարձրացնել աշխատունակությունը, մոտիվացիան, ինչն էլ դրական ազդեցություն է թողնում շրջապատի մարդկանց վրա: Եվ պատահական չեն հետևյալ խոսքերը.
<<Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է : Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս , իսկ հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է>>:

Մեր հանրակրթությանը հանճարեղ ուսուցիչներ են պետք:

2.6 Կիրառվող տեխնոլոգիաներ և նորարարություններ

Ուսումնական հաստատությունը փորձում է առաջնորդվել ժամանակի պահանջների համապատասխան ՏՀՏ գործիքներով հագեցած կրթություն ապահովել: Փորձի փոխանակման շնորհիվ արագորեն տարածվում են նոր կիրառվող ՏՀՏ գործիքները: Դպրոցն ունի էլեկտրոնային պաշարների շտեմարան, որտեղ տեղադրված են տարբեր դասարանների համար նախատեսված էլեկտրոնային նյութեր: Յուրաքանչյուր շաբաթվա ավարտին մեթոդական մասնախմբերի ներսում կազմակերպվում են քննարկումներ, ՏՀՏ գործիքների ուսումնասիրություն, առարկայական նյութի պատրաստում:
Դպրոցում աշխատում են <<Դասավանդի՛ր, Հայաստան>> կրթական հիմնադրամի 2 ուսուցիչ-առաջնորդներ, ուսուցիչներ, որոնք նպաստում են հիմնադրամի որդեգրած գաղափարախոսության տարածմանը: Մեծ ուշադրություն է դարձվում յուրաքանչյուր դասարանում դասարանային մշակույթի ձևավորմանը, կանոնների, ընթացակարգերի մշակմանը: Դասերի պլանավորման համար կիրառվում են դասի պլանավորման տարբեր գործիքներ՝ ուշադրություն դարձնելով յուրաքանչյուր փուլում կիրառվող մեթոդների ընտրությանը, դասի նպատակներին:

Մի շարք առարկաների գործնական աշխատանքներ իրականացվում են google classroom ծրագրի միջոցով, ինչը ավելի է հեշտացնում ուսուցչի աշխատանքը և բարձրացնում է աշակերտների աշխատելու ցանկությունը և պատրաստակամությունը:

Նորարարական մեթոդներ են կիրառվել գրականության ժամերին: 2022-2023 ուսումնական տարում 11-րդ դասարանում գործածվել է գրականության օնլայն տետր, որտեղ աշակերտները գրի են առել իրենց մտքերը:

Ուսումնական հաստատություններում կիրառվող դաս-դասարանային համակարգը երբեմն ձանձրացնում է աշակերտներին: Երբեմն դասապրոցեսը ավելի հետաքրքիր դարձնելու համար ուսումնական գործընթացը կազմակերպվում է բացօթյա՝ հատուկ ձևավորված դասարանում, որի ձևավորումը, կահավորումն ու կանաչապատումը կազմակերպվել է աշակերտների կողմից:

Ստորև ներկայացնում ենք աշակերտների աշխատանքից մի քանի էջ.


Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունները
Հայրենասիրական
<<Երգեր ու վերքեր>>
Մայրերգություն
Փիլիսոփայություն
Չափածո
Արձակ
Բանաստեղծություններ
Քայլերգեր
Պոեմներ
Պատմվածքներ
<<Մի մրահոն աղջիկ տեսա>>
<<Գիշեր եկավ...>>
<<<Հայրենի հողը>>
<<<Հավերժական սերը>>
<<Աբու-Լալա մահարի>>
<<Սասնդի վերջին գպրունը>>
<<<Համբերանքի չիբուխը>>

<<Երջանիկ մահը>>
Փորձի՛ր բացատրել նորավեպի վերնագիրը:Ի՞նչ ես կարծում մահը կարո՞ղ է երջանիկ լինել:
Դոկտոր Վահանյանը երեկույթներից մեկի ժամանակ հարց է տալիս, թե ո՞րն է երջանիկ մահը: Տարբեր կարծիքներ են առաջ քաշվում, սակայն ամեն մի տեսակետ իր բացասական կողմն ուներ: Դոկտորն հիշում է, թե խնջույքներից մեկի ժամանակ ինչպես է հանդիպում քառասուներորդ մի կնոջ, ով արդի գրող ուներ: Այնտեղ նաև մի երիտասարդ կար, որի հանդեպ այդ կինը անտարբեր չէր: Բոլորը նրանց մեջ իսկական նեղդաշնակություն էին տեսնում: Դարերու ժամանակ սայթաքումի պես մի բան պատահեց, և տիկինը քիչ մնաց վայր ընկներ: Երիտասարդը բռնեց նրան: Դարձվեց, որ նվաղում էր տեղի ունեցել: Կինը մահացավ այդ երիտասարդի կողքին, չտառապեց ցավերի մեջ և ծերությունը չիշացրեց նրան:
Իմ կարծիքով մահվան զեղեցկությունը չի կախված դրա պատճառից, այլ կախված է թե որտեղ և ինչ իրադարձության մեջ դա տեղի ունեցավ:

2.7 Իրավիճակի SWOT վերլուծության ամփոփում



Շենքային պայմաններ. Նյութատեխնիկական բազա	
<u>Ուժեղ կողմեր</u>	***<u>Թույլ կողմեր</u>***
• Մասնակիորեն վերանորոգված սենյակներ (գրադարան, ճաշարան, հանդիսությունների սրահ) • Համակարգիչների առկայություն • Վերանորոգված մարզադահլիճ, մարզագույքով ապահովվածություն • Մարկերային գրատախտակներ • Նոր փոփոխված պատուհաններ • Պրոեկտորի առկայություն	• Շենքային վատ պայմաններ • Փոքր դասարաններ. յուրաքանչյուր աշակերտի համար նորմայից քիչ տարածք • Պահուստային դասասենյակների բացակայություն • Նոութբուկերի սակավություն • Պրոեկտորների սակավություն

	• Էլեկտրոնային գրատախտակի բացակայություն • Տպիչ սարքերի քչություն • Առարկայական դիդակտիկ նյութերի սակավություն • Գույքի մաշվածություն և հնություն • Հին դռներ • Լաբորատորիայի և արհեստանոցի ոչ արդյունավետ աշխատանք շենքային պայմաններից ելնելով
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• Ներքին հարդարման աշխատանքների իրականացում • Անհրաժեշտ տեխնիկայի ձեռքբերում • Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	• Անբավարար ֆինանսական միջոցներ
ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***

• Պատրաստակամ ծնողական խորհուրդ • Լավ մասնագետներից ձևավորված մանկավարժական խորհուրդ • Ակտիվ աշակերտական խորհուրդ • Մշտապես զարգացող, ինքնակրթվող մասնագետներ • Ծնողական խորհրդի աջակցություն ուսումնադաստիարակչական գործընթացում	• Քիչ ներգրավվածություն դպրոցական կյանքին • Շրջանավարտների խորհրդի բացակայություն • Խորհրդակցական մարմինների ներգրավում ուսումնական հաստատության ներքին կանոնների մշակմանը • Համագործակցային միջոցառումների (ծնող, ուսուցիչ, աշակերտ) կազմակերպում • Դասը վարում է ծնողը
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• Ծնողների ակտիվ մասնակցություն ուսումնական հաստատության գործունեությանը • Շրջանավարտների խորհրդի ստեղծում	• Ծնողների ոչ կառուցողական վարքագիծ, համագործկցելու ցանկության պակաս • Շրջանավարտների համայնք չվերադառնալու ցանկություն
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• Բարձրագույն կրթությամբ մանկավարժներ • Միմյանց հետ համագործակցող ուսուցիչներ • ՏՀՏ գործիքներ կիրառող ուսուցիչներ • Առարկայական մասնագետներով ապահովվածություն	• Փոփոխություններին դժվար հարամարվող աշխատակիցներ • Ուսուցիչների մոտիվացիայի պակաս • ՏՀՏ գործիքների, համագործակցային ուսուցում կիրառելուց խուսափող մանկավարժներ • Նոր չափորոշիչների հետ կապված դժվարությունների առաջացում

• Տարակարգ ունեցող, կամավոր ատեստավորման բարձր արդյունքներ գրանցած մասնագետներ • Պարբերաբար վերապատրաստումների մասնակցող, ինքնակրթվող երիտասարդ կադրեր	
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• Սեմինարների, քննարկումների, վերապատրաստումների, կլոր սեղանների կազմակերպում	• Աշխատակիցների տարիքային շեմը խանգարում է մասնագիտական աճին
ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• միջոցառումներին ակտիվ մասնակցող աշակերտական համակազմի մեծամասնությունուն • ինքնուրույն նախաձեռնություններով հանդես եկող աշակերտական խորհուրդ • ՏՀՏ գործիքների կիրառման մեջ հմուտ աշակերտներ	• Հասարակական, կամավորական աշխատանքների ներգրավման պակաս • Ուսումնական հաստատությունից դուրս արտադպրոցական միջոցառումների մասնակցություն • Մոտիվացիայի պակաս աշակերտների շրջանում
Հնարավորություններ	***Ռիսկեր***

• Հասարակական, կամավորական աշխատանքների կարևորության արժևորում • Աշակերտների մոտիվացիան խթանող միջոցառումների կազմակերպում	• Աշակերտների անտարբերություն • Արատավոր երևույթների տարածում աշակերտների շրջանում
ՀԱՄԱՅՆՔ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• Համայնքային միջոցառումների մասնակցություն • Համայնքի հնարավորությունները, կարիքները բացահայտող նախագծային աշխատանքների իրականացում • Այլ ուսումնական հաստատությունների հետ փորձի փոխանակում • Կրթության կառավարման մարմինների հետ սերտ համագործակցություն	• Միջհամայնքային նախագծերի իրականացում
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• Տարբեր տոնակատարությունների, միջոցառումների կազմակերպում	• Մոտիվացիայի պակաս համայնքային միջոցառումների կազմակերպչական

• Համայնքի հնարավորությունները բացահայտող նախագծային աշխատանքների իրականացում	աշխատանքներում ներգրավվելու համար
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ	
ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	**ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ**
• Մի քանի վերանորգված սենյակների առկայություն • Սպորտային մարզագույքով ապահովվածություն • Մարկերային գրատախտակների առկայություն բոլոր դասարաններում • Դպրոցի հարակից տարածքում <<կանաչ>> դասարանի առկայություն • <<Արմաթ>> լաբորատորիայի, հաստատությունում գործող այլ խմբակների առկայություն	• Անհրապույր, մոտիվացիա չառաջացնող ուսումնական միջավայր • Հարմարավետ հանգստյան գոտիների բացակայություն • Սնվելու հնարավորության բացակայություն 5-12 րդ դասարանցիների համար • Ուսումնական գործընթացում կիրառվող դիդակտիկ նյութերի պակաս • Արդյունավետ գործունեություն ապահովող առարկայական դասարանների առկայություն • Փափուկ անկյուն – ընթերցարանի բացակայություն
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• Մարդկային ռեսուրս • Տարբեր մրցույթային ծրագրերին մասնակցելու հնարավորություն • Սեփական միջոցներով դիդակտիկ նյութերի պատրաստում • Դպրոցի հարակից կանաչ գոտիների առկայություն	• Ֆինանսական սուղ պայմաններ • Մակերեսի սակավություն • Աշխատակիցների և աշակերտների անտարբեր վերաբերմունք կազմակերպվելիք աշխատանքներին

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ	
Ուժեղ կողմեր	***Թույլ կողմեր***
• Բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվող շրջանավարտների մեծ թիվ • Քննական առարկաների բարձր արդյունք • Առարկաների դրվածքների ուսումնասիրություններ • Մնացորդային ստուգումների բարձր արդյունքներ • Նոր չափորոշչային պահանջներին համապատասխան դասապրոցեսի իրականացում • Պարբերաբար իրականացվող մշտադիտարկումներ • Տնօրենության կողմից կազմակերպվող գրավոր աշխատանքներ	• ուսուցչակենտրոն դասերի իրականացում • Փորձեր , գիտափորձեր անելու հնարավորության պակաս • Տեխնիկական կահավորման պակաս, ինչը խանգարում է ժամանակի պահանջներին համապատասխան կրթության տրամադրման
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• ՏՀՏ հագեցվածության ապահովում • Պարբերաբար ցուցադրական դասերի կազմակերպում	• Ֆինանսական միջոցների անբավարարություն
ՆՈՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿԻՐԱՌՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ	

ՈՒԺԵՂ կողմեր	***Թույլ կողմեր***
• ՏՀՏ գործիքերով դասապրոցեսի կազմակերպում համեմատաբար երիտասարդ մասնագետների կողմից • Տարբեր ծրագրերի, նախագծերի իրականացում • Ուսումնական գործընթացում նոր մեթոդների կիրառում	• Նորարարությունների մերժում
Հնարավորություններ	***Ռիսկեր***
• ՏՀՏ գործիքների առկայություն • Էլեկտրոնային ռեսուրսների առկայություն	• Չմոտիվացված աշխատակիցներ • Ժամանակի սղություն նորարական տեխնոլոգիաները ուսումնասիրելու համար

3. Նպատակների և խնդիրների սահմանում

SWOT վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել դպրոցի առանձնահատկությունը, վեր հանել այն ռեսուրսները, որոնք առկա են դպրոցում: Սրան զուգահեռ ակնհայտ են դառնում այն հանգամանքները, որոնցից կախված է դպրոցի զարգացումը: Հաշվի առնելով հնարավորությունները և այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ զարգացման ծրագրի իրականացման ընթացքում՝ փորձել ենք 2023-2028 թթ-ի համար սահմանել հնարավորինս սմարթ նպատակներ, որոնց իրագործման համար բխեցրել ենք խնդիրներ: Գործողությունների պլանի բարեհաջող իրականացման դեպքում դպրոցի զարգացման ծրագիրը կարող ենք համարել հաջողած:

Սմարթ նպատակներ սահմանելիս պետք է հաշվի առնել հետևյալ կետերը.



Ելնելով վերոնշյալ վերլուծություններից փորձել ենք սահմանել ուսումնական հաստատության գործունեության նպատակները՝ ըստ առանձնացված 6 ոլորտների.

Շենքային պայմաններ, նյութատեխնիկական բազա

Նպատակներ

- բարելավել որակյալ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները
- վերակահավորել ուսումնական հաստատության դասասենյակները
- հնարավորության դեպքում (շենքային պայմաններից ելնելով) ձևավորել առարկայական դասարաններ
- հարստացնել ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը:

Խնդիրներ

- Դասարանների վերակահավորում
- Դասասենյակների վերանորոգում՝ ըստ անհրաժեշտության
- Առարկայական անկյունների ձևավորում
- Նյութատեխնիկական բազայի համալրում,նոր համակարգիչների, տպիչ սարքերի, էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում

Ռիսկեր

- Անբավարար ֆինանսական միջոցներ
- Շենքային ոչ բավարար մակերես

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Դոնոր կազմակերպությունների, տարբեր ֆոնդհայթայթման ծրագրերի իրականացում
- Դպրոցի հարակից տարածքների օգտագործում

	Գործողություններ, միջոցառումներ	***Պատասխանատուներ***	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1.	Դասասենյակների դռների փոխում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող	Մինչև 2025 թվականի հունվար	• Ֆինանսական անհրաժեշտ միջոցներ • Շինարարության համար անհրաժեշտ պարագաներ • Մարդկային ռեսուրս
2.	Դասասենյակների վերակահավորում ըստ անհրաժեշտության	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, ուսուցիչներ, ծնողներ	Պարբերաբար՝ ըստ անհրաժեշտության	• Աշակերտական նստարաններ • Պահարաններ • կախիչներ
3.	Առարկայական դիդակտիկ նյութերի ձեռքբերում և պատրաստում, առարկայական անկյունների ձևավորում	Ուսուցչական կոլեկտիվ	Պարբերաբար՝ ըստ անհրաժեշտություն	• ֆինանսական միջոցներ • տպիչ սարքեր • համապատասխան տարածք
4	Ըստ առարկաների էլեկտրոնային պաշարների հավաքագրում	Ուսուցչի օգնական , ինֆորմատիկայի ուսուցիչներ	պարբերաբար	• համակարգիչ • ամպային տարածք

5.	Համակարգչային լսարանի վերազինում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակարգող, դոնոր կազմակերպություններ	Մինչև 2026 թվականի հունվար	• համակարգիչներ • պրոեկտորներ • էլեկտրոնային գրատախտակ • տպիչներ

Խորհրդակցական մարմիններ

Նպատակներ

- Մեծացնել խորհրդակցական մարմինների մասնակցությունն ու դերը ուսումնական հաստատության գործունեության մեջ
- Ակտիվացնել խորհրդակցական մարմինների աշխատանքը

Խնդիրներ

- Խորհրդակցական մարմինների իրավունքների և պարտականությունների իրազեկման բարձրացում
- Ծնողական խորհրդի ներգրավում ուսումնական գործընթացում՝ դասալսումների, սեմինարների, հանդիպումների ձևաչափով
- Աշակերտական խորհրդի մասնակցություն դպրոցին վերաբերվող հարցերի քննարկման շրջանակներում
- Կառավարման խորհրդի անդամների հետ հանդիպումների կազմակերպում
- Շրջանավարտների խորհրդի ձևավորում
- Դպրոցի շրջանավարտների հետ մասնագիտական կողմնորոշման դասընթացների իրականացում

Ռիսկեր

- Խորհրդակցական մարմինների անդամների ոչ կառուցողական տրամադրվածություն
- Ձեռնարկվող գործունեության մասին ոչ լիարժեք տեղեկատվության տրամադրում
- Աշակերտների մոտիվացիայի պակաս
- Կառավարման խորհրդի մասնակիցների զբաղվածություն

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Պարբերաբար տարբեր հարթակներով խորհրդակցական մարմինների հետ կատարած կամ կատարվելիք աշխատանքների վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում

- Աշակեևետների հետ տարբեր հարցերի քննարկում , նրանց դերի ու կարծիքի կարևորում և արժևորում

- Ժամանակակից տեխնոլոգիաներով հեռավար ձևաչափով հանդիպումների կազմակերպում՝ ժամանակի խնայողության համար

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

Խորհրդակցական մարմիններ

N	***Գործողություններ, միջոցառումներ***	***Պատասխանատուներ***	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1	Կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ խորհրդակցական մարմիններից յուրաքանչյուրի հետ	Տնօրեն, փոխտնօրեն, մեթոդմիավորման նախագահներ,դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ, խորհրդակցակա մարմինների ղեկավարներ	պարբերաբար	• Համակարգիչ • Սահիկ • Մարդկային ռեսուրս
2	Սեմինարների իրականացում խորհրդակցական մարմինների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ	Տնօրեն, փոխտնօրեն, խորհրդակցակա մարմինների ղեկավարներ	պարբերաբար	

3	Համադպրոցական ծնողական ժողովների կազմակերպում	Ուսուցչական անձնակազմ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին	• Համակարգիչ • Սահիկ • Մարդկային ռեսուրս
4	Ծնողների կողմից ըստ մասանգիտությունների սեմինար-դասերի վարում	Ծնողական խորհուրդ	Յուրաքանչյուր ուսումնական տարում 2-3 անգամ	
5	Ծնողների ներգրավում նախագծային աշխատանքների իրականացմանը	Նախագծի ղեկավար ուսուցիչ, ծնողական խորհրդի նախագահ	պարբերաբար	
6	Մեթոդական մասնախմբերի պլանավորած աշխատանքների քննարկում, համապատասխանության ստուգում	Տնօրեն , փոխտնօրեն, մեթոդական մասնախմբի նախագահ	պարբերաբար	
7	Աշակերտական խորհրդի ներգրավում դասարանական անկյունների ստեղծմանը, ներքին կարգապահական նորմերի ու կանոնների իրագործմանը	Աշակերտական խորհրդի նախագահ, ԴԱԿ, փոխտնօրեն , դասղեկներ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ	
8	Ներքին կարգապահական կանոնների քննարկում, մշակում և ամրագրում տարբեր խորհրդակցական	Ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ	

	մարմիններում կազմակերպված միջոցառումների հիման վրա	Մանկավարժական խորհուրդ կառավարման խորհուրդ		
9	Կառավարման խորհրդի հետ զարգացման ծրագրի քննարկում, ամենամյա կատարողական հաշվետվության ներկայացում	Տնօրեն , կառավարման խորհրդին	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտ	
10	Շրջանավարտմերի խորհրդի ձևավորում	Շրջանավարտներ, տնօրեն, ուսուցչական համակազմ	2024 թ օգոստոս	
11	Շրջանավարտների ներգրավում դպրոցական առօրյային, փորձի փոխանակում մասնագիտական խորհրդատվության տրամադրում	Շրջանավարտներ, ուսուցիչներ, աշակերտներ	պարբերաբար	

Համայնք, կրթության կառավարման մարմիններ, շահառու խմբերի հետ համագործակցություն

Նպատակներ

- Մեծացնել համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու խմբերի հետ համագործացությունը

Խնդիրներ

- Համայնքային խնդիրների լուծմանն ուղղված միջոցառումներին ներգրավվածության ապահովում
- Կրթության կառավարմանն մարմինների հետ համագործակցության շարունակականություն
- Համայնքային միջոցառումների համատեղ կազմակերպում
- Հարակից համայնքների ուսումնական հաստատությունների հետ համատեղ միջոցառումների, փոխադարձ դասալսումների , փորձի փոխանակաման կազմակերպում

Ռիսկեր

- Ներգրավված մասնակիցների զբաղվածություն

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Շահագրգիռ անձանց հետ համագործացություն , համագործակցության լուսաբանում, դրական օրինակի կիրառում

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

<u>Համայնք, կրթության կառավարման մարմիններ, շահառու խմբերի հետ համագործակցություն</u>

N	***Գործողություններ, միջոցառումներ***	***Պատասխանատուներ***	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1	Նախագծային աշխատանքների իրկանացում, որոնք կունենան համայնքային ուղղվածություն	Ուսուցիչներ , դասղեկներ, փոխտնօրեն	Յուրաքանչյուր ուսումնական տարի	
2	Համայնքային շաբաթօրյակների, մաքրման աշխատանքների կազմակերպում և ներգրավվածություն	Համայնքի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, աշակերտներ,ծնողներ	Ըստ անհրաժեշտության	• Մաքրման համար անհրաժեշտ պարագաներ • Աղբահանության համար անհրաժեշտ տրանսպորտային միջոց • Մարդկային ռեսուրս
3	Դպրոցի հարակից տարածքում, համայնքի համապատասխան վայրերում ծառատունկի կազմակերպում	Համայնքի ներկայացուցիչներ, ուսուցիչներ, աշակերտներ	2024թ գարուն	• Տնկիներ • Աշխատանքային գործիքներ • Մարդկային ռեսուրս

4	Հարևան համայնքների, մարզկենտրոնի դպրոցների հետ համատեղ միջոցառումների իրականացում	Տնօրեններ, ուսուցիչներ , աշակերտական համակազմ	2023-2024 թթ	• Տրանսպորտային միջոցի առկայություն
5	Հարևան համայնքների ուսումնական հաստատությունների մանկավարժական կադրերի հետ փորձի փոխանամկում, կլոր սեղանների կազմակերպում	Տնօրեններ, ուսուցիչներ	2023-2024	• Տրանսպորտային միջոցի առկայություն
6	Համայնքի տարածքում գործունեություն ծավալող տարբեր ձեռնարակատիրություններ այցերի կազմակերպում՝ մասնագիտական կողմնորոշման,համայնքի հնարավորությունների բացհայտման համար	Տնօրեն , ուսուցիչ, դասղեկ ,ձեռնարկատեր, աշակերտենր	2024-2026 թթ	

Ուսումնական միջավայր

Նպատակներ

- Ապահովել ժամանակի պահանջներին համապատասխան հարմարավետ ուսումնական միջավայր
- Նպաստել սովորողների մոտիվացիան բարձրացնող , ուսումնառությանը խթանող , հետաքրքրություններ բավարարող ուսումնական միջավայրի ձևավորմանը

Խնդիրներ

- Դպրոցի տարբեր անկյուններում տարբեր առարկաներին վերաբերող պատկերավոր տեղեկատվության առկայության ապահովում
- Դպրոցի միջանցքներում աշակերտների նախասիրություններին համապատասխան անկյունների ձևավորում
- Դպրոցի տարբեր հատվածներում հանգստի անկյունների ստեղծում
- Աշակերտների նախասիրությունները բավարարող արտադպրոցական խմբակների ստեղծում
- Աշակերտական առօրյայի հագեցվածության ապահովում զանզան ինտելեկտուալ,սպորտային միջոցառումների , կլոր սեղանների , բանավեճերի կազմակերպում

Ռիսկեր

- Անբավարար ֆինանսական միջոցներ
- Անհրաժեշտ տարածքի բացակայություն
- Աշխատուժի պակաս

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Ֆոնդհայթայթման միջոցառումենրի իրականացում
- Ծնողական համայնքի, աշակերտների, ուսուցիչների օժանդակություն իրականացվող աշխատանքներում

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

Ուսումնական միջավայր

N	***Գործողություններ, միջոցառումներ***	*Պատասխանատուներ*	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1	Դպրոցի ներքին հարդարման աշխատանքների իրականացում	• Ուսուցիչներ • Աշակերտներ • ծնողներ	2023-2028 թթ	• շինարարական նյութեր և պարագաներ • մարդկային ռեսուրս • կահավորման համար անհրաժեշտ պարահաներ
2	Դպրոցի հարակից տարածքներում կանաչապատ տարածքների, հանգստի անկյունների ձևավորում	ՆԶՊ, Կերպարվեստ, ֆիզկուլտուրա , տեխնոլոգիա առարկաների ուսուցիչներ	2024-2028 թթ	• մաքրման համար նախատեսված աշխատանքային պարագաներ • տնկիներ • ծաղիկների թփեր • նստարաններ

				• դաս-դասարանային համակարգի ձևավորման պարագաներ
3	Ընթերցանության համար նախատեսված անկյան ձևավորում	ՆԶՊ, Կերպարվեստ , ֆիզկուլտուրա , տեխնոլոգիա առարկաների ուսուցիչներ, գրադարանավար	2024-2028 թթ	• փափուկ կահույք • դարակներ • ժամանակակից գրականություն
4	Ըստ կրթական աստիճանների՝ աշակերտների նախասիրությունների շրջանակի բացահայտում	դասղեկներ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտ	
5	Նախասիրություններին համապատասխան խմբակների ծրագրերի կազմում համապատասխան մասնագետների կողմից	Ուսուցիչներ, խմբակավարներ	Յուչաքանչյուր ուսումնական տարվա ավարտ	
6	Աշակերտական խորհրդի ներգրավմամբ յուրաքանչյուր ուսումնական տարվա	Աշակերտական խորհրդի նախագահ,	Յուրքանքչյուր ուսումնական տարվա սկիզբ	

	միջոցառումների ժամանակացույցիի կազմում	աշակերտական համակամզ		
7	Ժամանակակից պահանջներին համապատասխան դասապրոցեսի կազմակերպում	Տնօրեն , փոխտնօրեն , ուսուցիչներ	2024-2028թթ պարբերաբար	• ՏՀՏ գործիքներով ապահովվածություն • էլեկտրոնային գրատախտակ • պրոեկտոր

Կրթության որակ

Նպատակներ

- Ձևավորել բազմակողմանի և ներդաշնակ զարգացած, հայրենասեր և ազգանվեր, պատասխանատու վարքագիծ դրսևորող,առաջնորդական կարողունակություններ ունեցող, տրամաբանող և վերլուծություններ կատարող քաղաքացի
- Ուսումնական տարվա համար սահմանել նվազագույնը 10% ակադեմիական աճ
- Ապահովել աշակերտների հետաքրքրվածությունը ուսումնական գործընթացի նկատմամբ

Խնդիրներ

- Դասապրոցեսի ընթացքում , ստեղծագործական, քննական մտածողության զարգացում
- Ինքնուրույն աշխատանքի, հետազոտական աշխատաննքներ կատարելու կարողունակությունների զարգացման ուղղված աշխատանքների կազմակերպում
- Իր յուրաքանչյուր արարքի, քայլի , սխալի համար պատասխանատվություն կրող քաղաքացու ձևավորման աջակցում
- Առարկայական գիտելիքներից ակադեմիական աճի ապահովում
- Օտար լեզուներով հաղորդակցվելու կարողունակության զարգացում
- Բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրության մեծացում
- Ժամանակակից տեխնոլոգիաներով հարուստ դասապրոցեսի կազմակեերպում

Ռիսկեր

- Ակադեմիական աճի գրանցում ոչ բոլոր դասարաններում

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Յուրաքանչյուր դասարանում փոքր նպատակի սահմանում, այնուհետև նպատակի մեծացում՝ կախված դասարանի ցուցանիշներից

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

Կրթության որակ

N	***Գործողություններ, միջոցառումներ***	***Պատասխանատուներ***	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1	Աշակերտների ստեղծագործական և քննադատական մտածողությունը զարգացնող միջոցառումների կազմակերպում	ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ	պարբերաբար	
2	Աշակերտների նախասիրությունների շրջանակներում սեմինարների, քննարկումներ,իրազեկման աշխատանքների կազմակերպում	Հոգեբան,դասղեկ, ուսուցիչներ, ԴԱԿ		
3	Նախագծային աշխատանքների ներմուծում աստիճանաբար բոլոր դասարաններում	Տնօրեն, փոխտնօրեն , ուսուցիչներ	2024-2025 ուսումնական տարվանից սկսած	
4	Ներդպրոցական վերահսկողության պլանով սահմանված գործողությունների իրականացում	Տնօրեն, փոխտնօրեն , ուսուցիչներ	պարբարար	

5	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին բոլոր դասաաններում հայտորոշիչ թեստերի կիրառում, մնացորդային գիտելիքի ստուգում, տվյալների հավաքագրում	Դասավանդող ուսուցիչներ, դասղեկներ	Յուրաքանչյուր ուսումնական տարվա սկիզբ	
6	Յուրաքանչյուր դասարանի համար հստակ նպատակների սահմանում և ռազմավարության մշակում նպատակներին հասնելու համար	Դասավոնդող ուսուցիչ , դասեկ , փոխտնօրեն	Յուրաքանչյուր ուսումնական տարավ սկիզբ	
7	Առարկաների դրվածքների ուսումնասիրություն	Տնօրեն , փոխտնօրեն	Ըստ ներդպրոցական վերահսկողության, ուսումնադաստիարակչական աշխատանքների պլանի	
8	Օտար լեզուներով և բանավոր, և գրավոր հաղորդակցման մակարդակի ստուգում	Տնօրեն, փոխտնօրեն , դասավանդող ուսուցիչներ	Ըստ ներդպրոցական վերահսկողության, ուսումնադաստիարակչական	

			աշխատանքների պլանի	
9	Օտար լեզուների դասաժամերին աուդիոձայնագրությունների կիրառում	Տնօրեն , փոխտնօրեն, դասավանդող ուսուցիչ	Պարբերաբար	• Աուդիոձայնագրություններ • համակարգիչներ
10	Մշտադիտարկում տարբեր առարակաների շրջանակներում չափորոշիչների ներդրման հետ կապված	Տնօրեն , փոխտնօրեն	պարբերաբար	
11	Պարբերաբար իրականցված դասալսումների միջոցով կարիքի գնահատում և ըստ անհրաժեշտության խորհրդատվության կազմակերպում	Տնօրեն , փոխտնօրեն	պարբերաբար	• դասալսման թերթիկ
12	Տնօրենության կողմից հանձնարավող գրավորների վերլուծություն , կարիքի վերհանում	Տնօրեն , փոխտնօրեն. դասավանդող ուսուցիչ	պարբերաբար	• թեստեր • թղթեր
13	Աշակերտների վարքագծին , տարիքային առանձնահատկություններին համապատասխան հանդիպումների, քննարկումների կազմակերպում	Հոգեբան , դասղեկ , ծնող	պարբերաբար	• վիդեոդասեր • թեստեր

	ուսումնական հաստատության հոգեբանի հետ			
14	ԿԱՊԿ ունեցող աշակերտների ակտիվ ներգրավում ուսումնական գործընթացին, ներգրավման գործիքակազմի, ռազմավարության մշակում	Հոգեբան, սոցմանկավարժ,դասղեկ, դասավանդող ուսուցիչ	Յուրաքանչյուր ուսումնական տարավ սկիզբ	

Նորարարություն, տեխնոլոգիաներ

Նպատակներ

- Բարելավել կրթության որակը՝ գործածելով ժամանակակից տեխնոլոգիաներ, նորարարկան մոտեցումներ ու մեթոդներ
- Կիրառել նորարարկան տեխնոլոգիաներ և մեթոդներ նոր չափորոշիչների ներդրման գործընթացում

Խնդիրներ

- Ժամանակակից տեխնոլոգիաների փուլային կիրառում
- Նորարարություններ կիրառող ուսուցիչների աշխատանքի ներկայացում և խրախուսման մեխանզմների գործածում
- Համագործակցության մեծացում վերապատրաստող կազմակերպությունների հետ
- Պարբերաբար ոլորտի նորությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքների կազմակերպում
- Մեդիագրագիտության մակարդակի բարձրացում

Ռիսկեր

- Ժամանակի պահանջներին համապատասխան տեխնիկական հագեցվածության պակաս
- Նորարարկան գաղափարների ու մոտեցումների մերժում կամ սակավ կիրառություն

Ռիսկերին նվազեցմանն ուղղված գործողություններ

- Տեխնիկական միջոցների ձեռքբերում
- Նորարարական գաղափարների փորձարկում, արդյունավետության հիմնավորում փաստերով

Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց

Նորարություն և տեխնոլոգիաներ

N	***Գործողություններ, միջոցառումներ***	***Պատասխանատուներ***	***Ժամանակացույց***	***Անհրաժեշտ միջոցներ, պարագաներ***
1	Համակարգչային տեխնիկայի, պրոեկտորների, տպիչ սարքերի, էլեկտրոնային գրատախտակի ձեռքբերում	Տնօրեն, վարչատնտեսական մասի համակրագող, էլեկտրոնային դասավանդման մասնագետ, ինֆորմատիկայի ուսուցիչ	2024-2028 թթ	• Ֆինանսական միջոցներ • Դոնոր կազմակերպություններ
2	Նորարարություններ կիրառող մանակավարժների կողմից բաց դասերի, միջոցառումներ կազմակերպում	Փոխտնօրեն. ուսուցիչներ	պարբերաբար	
3	Էլեկտրոնային ռեսուրսների թարմացում ըստ առարկաների և դասարանների	Օպերատոր, ինֆորմատիկայի ուսուցիչ, ուսուցիչներ	պարբերաբար	

4	Վերապատրաստող կազմակերպությունների, ոլորտը կարգավորող կազմակերպությունների հետ սեմինարների, իրազեկման միջոցառումների կազմակերպում	Տնօրեն, փոխտնօրեն		
5	Մեդիագրագիտությանը վերաբերող միջոցառումների, մասնագետների հետ հանդիպումների կազմակերպում	Տնօրեն, փոխտնօրեն		
6	Ուսուցիչների ներգրավում ԿԶՆԱԿ-ի կազմակերպած սեմինարներին	Տնօրեն , փոխտնօրեն		

4. Արդյունքների գնահատման չափանիշներ

Հ/հ	նպատակ	գործողություն	կատարողական	Արդյունքի գնահատական	Արդյունքի գնահատման չափանիշ
	բարելավել որակյալ ուսումնական գործընթաց կազմակերպելու համար անհրաժեշտ պայմանները հարստացնել ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան՝ նպաստելով կրթության որակի բարելավմանը:	Նյութատեխնիկական բազայի համալրում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%
				3	Գործողությունների ժամանակացույցում ներվառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում

					ներառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Մեծացնել խորհրդակցական մարմինների մասնակցությունն ու դերը ուսումնական հաստատության գործունեության մեջ	Խորհրդակցական մարմինների հետ պարբերաբար հանդիպումների, միջոցառումներ, քննարկումների կազմակերպում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գորոծողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%
				3	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%

				4	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Նպաստել սովորողների մոտիվացիան բարձրացնող , ուսումնառությանը խթանող , հետաքրքրություններ բավարարող ուսումնական միջավայրի ձևավորմանը	Սովորողների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գորոծողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%
				3	Գործողությունների

					ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում ներառծված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Ձևավորել բազմակողմանի և ներդաշնակ զարգացած, հայրենասեր և ազգանվեր, պատասխանատու վարքագիծ դրսևորող,առաջնորդական կարողունակություններ ունեցող, տրամաբանող և	Ներդաշնակ համակողմանի զարգացած անհատի ձևավորմանն ուղղված միջոցառումների կազմակերպում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%

	վերլուծություններ կատարող քաղաքացի			3	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Ակադեմիական աճի գրանցում	Կրթության որակի աճին նպաստող գործողությունների իրականացում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներվառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գորոծողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%

				3	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Բարելավել կրթության որակը՝ գործածելով ժամանակակից տեխնոլոգիաներ, նորարարկան մոտեցումներ ու մեթոդներ	Ժամանակակից տեխնոլոգիաներով հագեցած դասապրոցեսի կազմակերպում	✓ Կատարված է	1	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված չեն
			▪ Կատարված չէ	2	Գորոծողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 25%

				3	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%
	Մեծացնել համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու խմբերի հետ համագործացությունը			1	Գործողությունների ժամանակացույցում ներվառված անելիքները կատարված չեն
				2	Գործողությունների ժամանակացույցում ներվառված անելիքները կատարված են 25%

				3	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 50%
				4	Գործողությունների ժամանակացույցում ներվառված անելիքները կատարված են 75%
				5	Գործողությունների ժամանակացույցում ներառված անելիքները կատարված են 100%

5. Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողության մեխանիզմները

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը պլանավորած գործողությունների և իրականացման արդյունքների համեմատությունն է: Յուրաքանչյուր սահմանված նպատակի համար արդյունքների գնահատման համար կգործի 1-5 բալանոց գնահատման համակարգ, որի գնահատման չափանիշները ներկայացված են վերոնշյալ աղյուսակում:

Ուսումնական հաստատության զարգացման ծրագրի հիման վրա յուրաքանչյուր ուսումնական տարի կազմվում է ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան, որի հիման վրա էլ կազմակերպվում են հաստատության տարվա անելիքները: Զարգացման ծրագիրը, աշխատանքների կազմակերպման ընթացքում, անհրաժեշտ է պարբերաբար վերանայել, ըստ անհրաժեշտության կատարել փոփոխություններ :

Դպրոցի զարգացաման ծրագրի կատարման գնահատմանն է ուղղված արտաքին և ներքին գնահատման մեխանիզմները: Դպրոցների արտաքին գնահատումը կատարվում է անկախ կազմակերպությունների կողմից, արտաքին գնահատման արդյունքները դպրոցը վերլուծում է, այնուհետև մշակում քայլեր թերությունների շտկման ուղղությամբ:

Դպրոցի ներքին գնահատումը դպրոցի գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատում իրականացնելու նպատակով դպրոցում ձևավորվում է հանձնաժողով: Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղված է հաստատության գործունեության բարելավմանը, կրթության որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականի վերահսկողությունը վերապահված է ուսումնական հաստատության կառավարման խորհրդին, որը յուրաքանչյուր ուսումնական տարվա կատարման վերաբերյալ լսում է հաշվետվություն և տալիս եզրակացություն:

Զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշները ու պահանջները ներկայացնել ըստ սահմանված ձևի:

N	Միջոցառում/գործողություն	Ակնկալվող արդյունք	Սահմանված ժամկետ	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սամնված ժամկետում միջոցառման գործողության չկատարման կամ մասնակի կատարման առյաության դեպքում պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ կատարելու մասին առաջարկություններ	Նշումներ
1							
2							
3							

Վերջաբանի փոխարեն

Իմ երազանքների դպրոցը

Ռաֆֆու ,Խենթն ընթերցելիս ամենից շատը տպավորված էի Հայաստանի ապագայի տեսլականով: Հիմա էլ Ռաֆֆու հերոսի՝ հզոր ու զարգացած պետություն ունենալու երազանքն արդիական է: Մեր երազանքների երկիրը կառուցելու, այն շենացնելու և հզորացնելու համար պետք է նախ հզորացնենք մեր կրթական համակարգը:

Կրթական համակարգը հանդիսանում է յուրաքանչյուր պետության շարժիչ ուժը, սա բոլորին քաջ հայտնի և շատ երկրներում արդեն իսկ ապացուցված փաստ է: Ուսումնասիրելով տարբեր երկրների կրթական համակարգը՝ կարող ենք եզրակացնել և փաստել, որ այն պետությունները, որոնք իրենց ուշադրության կենտրոնում են պահում կրթական համակարգը, մոտ ապագայում, անպայման, ունենում են հաջողություններ:

Արդեն տասը տարի է, ինչ դասավանդում եմ հանրակրթական ուսումնական հաստատությունում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի, վերջին երեք տարիներին էլ կատարում եմ վարչական աշխատանք: Տասը տարին բավականին երկար ժամանակահատված է որոշակի եզրահանգումներ կատարելու համար: Կրթական համակարգի վերաբերյալ իմ պատկերացումները կապված են նորարարության, տեխնոլոգիաների կիրառման,ստեղծարարության հետ, իսկ ԴՀ-ն իմ կյանքում հայտնվեց ճիշտ ժամանակին՝ ևս մեկ անգամ փաստելու, որ նորարությունը, նոր մոտեցումները կարող են բարելավել կրթության որակը:

Երբ դեռ նստած էի աշակերտական նստարանին, երազում էի սովորել մեծ ու բարեկարգ, լուսավոր ու հատկապես տաքուկ դպրոցում: Ինչո՞ւ հատկապես տաքուկ, քանի որ ձմռան ցուրտ օրերին դասերը կրճատվում էին և դասաժամերի ամենահետաքրքիր պահերին լսվում էր ցրտից դողացող զանգի ձայնը: Դե, տեխնիկապես հագեցած դպրոցը նույնպես երազանք էր, երազանք էր նաև հարուստ գրադարանով և ընթերցելու փափուկ անկյունով դպրոցը: Շատ տարիներ են անցել այն օրվանից, երբ ես աշակերտ էի, հիմա ես նույն դպրոցում ուսուցիչ եմ: Աշակերտական երազանքներս դեռևս անիրական են, բայց քանի որ

բովանդակությունն ավելի կարևոր է քան ձևը, ուստի կշարունակեմ խոսել բովանդակությունից:

Երբ մտնեք իմ երազանքների դպրոց, հիմնաքարեր կտեսնեք: Հիմնաքարերի վրա ամրագրված կլինեն այն կարևորագույն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի յուրաքանչյուր ոք, ով ոտք է դնում դպրոց:

Հիմնաքար առաջին՝ **մարդասիրություն**: Կրթության նպատակը առաջին հերթին մարդու ձևավորումն ու դաստիարակությունն է: Ձևավորել համակողմանի և ներդաշնակ զարգացած քաղաքացի, որը հասարակական շահը վեր կդասի անձնական շահից, կնպաստի իր համայնքի զարգացմանն ու հնարավորությունների բացահայտմանը: Իմ երազանքների դպրոցի կենտրոնը Մարդն է, որը գործում է, հետազոտում է , բացահայտում է, միշտ ձգտում է ավելիին:

Իմ երազանքների դպրոցը կառաջնորդի մարդ, ով օժտված կլինի առանձնահատուկ կարողունակություններով և կոմպետենցիաներով, առաջնորդական հմտություններով, կմշակի ռազմավարություն ուսումնական հաստատության զարգացման համար և այդ ռազմավարությունն անպայման մշակված և պլանավորված կլինի SMART չափանիշներով: Տնօրեն-առաջնորդն օրինակ կդառնա իր գործով և արարքներով, կօգնի և կօժանակի աշխատակիցներին այն ոլորտներում, որտեղ կլինի դրա անհրաժեշտությունը, կյուրացնի համակարգում կատարվող փոփոխությունները, կողջունի նորը: Արագ փոփոխություն կրող կրթական համակարգն այս դեպքում ուսուցչի համար կդառնա ոչ թե գլխացավանք, այլ զարգանալու, առաջ գնալու, ինչ-որ նոր բան փորձելու միջոց և հնարավորություն:

Իմ երազանքների դպրոցի տնօրենը, ուսուցիչը, աշակերտները, առհասարակ յուրաքանչյուրը կարող են սխալվել և որ ամենից կարևորն է կարող են բարձրաձայնել, հստակ և նպատակադրված քայլեր իրականացնել դրանք վերափոխելու համար: Առաջնորդի բարելավման շարունակական տեսլականը կվարակի ողջ համակարգը, աշխատակիցները ինքնաբավ կզգան իրենց, կհավատան, որ իրենք կարող են անել ավելին:

Իմ երազանքների դպրոցի երկրորդ հիմնաքարը **ինքնակրթությունը** կլինի: Կարևորագույն նախապայմաններից մեկը կլինի ուսումնական հաստատության յուրաքանչյուր աշխատակցի անվերջ ***զարգանալու, ինքնազարգանալու*** միտումն ու ցանկությունը, որովհետև անընդհատ կարելի է սովորել, կարելի է սովորել յուրաքանչյուրից՝ պատահական անցորդից, մեծից, փոքրից: Այո, այո, նույնիսկ քեզնից փոքրից: Այս վերջին դիտարկումը, ցավոք, դեևս այդքան էլ ընդունելի չէ:

Դպրոցի ռազմավարության գլխավոր նպատակներց մեկը կլինի ոչ թե ամեն ոլորտի համար ճիշտ թղթաբանության ապահովումը, այլ **կրթության որակի** բարելավումը: Երրորդ հիմնաքարը **որակյալ կրթությունը** կլինի: Մենք մեծ ուշադրություն ենք դարձնում ձևին, մոռանալով կարևորի՝ բովանդակության մասին: Մեր աշակերտներն էլ ժամանակի ընթացքում ընդօրինակում են մեզ, նրանք էլ են ավելի շատ ուշադրություն դարձնում ձևին, քան բովանդակությանը: Որակի բարելավման գլխավոր նախապայմանը տվյալների հավաքագրման հիման վրա իրականցվող ռազմավարությունների մշակումը կլինի, դասավանդվող առարկաների որակի բացահայտումը և համապատասխանաբար բարելավման ուղղությունների մշակում այն առարկաների դասավանդման համար, որոնց որակական տվյալները զիջում են համապատասխան չափանիշներին:

Համագործակցություն բառը ևս կլինի իմ երազանքների դպրոցի հիմնաքարերի վրա ամրագրված: Համագործակցություն գործընկերների հետ, համագործակցույթուն ծնողների հետ,համագործակցություն կրթության շահառու բոլոր կողմերի հետ: Համագործակցությունը հնարավորություն կտա տարածել արդյունավետ փորձը, գտնել խնդիրների լուծման առավել համապարփակ լուծումներ:Համագործակցությունը ևս ինքնազարգացման բաղկացուցիչ մասն է:

Երբ հիմնաքարերի վրա ամրագրվածներն արդեն իրողություն դառնան, հանուն իմ երազանքերի դպրոցի բարօրության ու զարգացման, կավելացնենք նոր հիմնաքարեր, որոնք կբովանդակեն բարձր ու վեհ արժեքներ: Մեր աշխատանքի

ընթացքում միշտ մատնացույց անելով հիմնաքարերը՝ դրանք կդարձնենք մեր կյանքի, առօրյայի մի մասը և բոլոր իրավիճակներում կառաջնորդվենք դրանցով:

Չչարաշահելով ձեր համբերությունը ուզում եմ խոսել իմ երազանքների դպրոցի ուսուցչի և աշակերտի մասին:
Իմ երազանքների դպրոցի ***ուսուցիչը***.... պատկերացնու՞մ եք նա գոհ է և ժպտում է: Նա կրթական համակարգի լույսն է, արևը, երևի դրա համար էլ միշտ ժպտում է:Նա **հավատում է**, որ յուրաքանչյուր աշակերտ ամենակարող է, ամենակարող է եթե միայն ունի ցանկություն, իսկ ցանկության բացակայության դեպքում հենց ուսուցիչն է ստեղծում այդ մղումը: Նա դրդում է աշակերտին դեպի նորը, դրդում է անպայման **փորձել**, փորձել ինչ-որ բան անել, իսկ չստացվելու դեպքում մխիթարում է, հուսադրում է այնքան փորձել, մինչը ստացվի:

Նա ընկեր է, խորհրդատու, հոգեբան, նրան հարգում են, որովհետև նա վաստակել է այդ հարգանքը, նրան սիրում են, որովհետև նա սեր է տալիս, սեր է դասավանդում:

Իմ երազանքի **աշակերտը ...**: Նա գիտակցում է, որ դարն իրեն տվել է անսահման հնարավորություն գործելու, բացահայտելու, ուսումնասիրելու, սովորելու, այս աշխարհում տարբեր իրավիճակներից հաղթանակած դուրս գալու համար: Նա հետազոտող է, անհրաժեշտ է միայն ուղղորդել նրան: Նա պահանջատերն է իր իրավունքների, բայց և քաջ գիտակցում է, որ իրավունքներին զուգահեռ կան նաև պարտականություններ:

Իմ երազանքի աշակերտը սխալվում է, բարձրաձայնում է իր ձախողումները, հետևողականություն է ցուցաբերում իր թերացումները շտկելու հարցում: Նա չափացանց հարցասեր է, որովհետև իրեն իրապես հետաքրքիր է հարցերի պատասխաններ գտնելը:Նա հարգում է ուսուցչին, քանի որ ուսուցիչն էլ հարգում է նրան, նա սիրում է ուսուցչին, քանի որ սեր է ստանում ուսուցչից: Ու պատկերացնում եք՝ նա էլ է գոհ ու նա էլ է ժպտում:

Ինչպես նշեցի արդեն, ես ուսուցիչ եմ, ունեմ քիչ աշակերտներ, բայց մենք գոհ ենք ու մենք ժպտում ենք դասի ընթացքում, դասի ավարտին, դասամիջոցին ու

առհասարակ, երբ հանդիպում ենք: Ու այսօր, ավելի քան վստահ եմ, որ մեզ պես գոհ են ու ժպտում են Հայաստանի Հանրապետության այն դպրոցներում, որտեղ տեղակայված են Դասավանդիր Հայաստանի ուսուցիչ-առաջնորդները:

Ռաֆֆու հերոսի երազանքը, ինչպես նշեցինք, այսօր էլ արդիական է: Հեղինակն իր վեպում չի առաջարկում լուծումներ երազանքների երկիր կառուցելու համար: Լուծումներ պետք է գտնենք մենք և գործով ապացուցենք, որ երազանքներն իրականություն դառնալու համառություն ունեն: